№ 24 ՈՒՐԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 2

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 2 № 24

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1907** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Յունվարի 29-ին, կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեց

Ղազարոս Սարգսեան Ափեանց

Այս մասին վշտով լցված որդիքը և փեսան յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին:

Ամբիծքը կը լինի ուրբաթ, փետրվարի 2-ին, երեկոյեան 5 և կէս ժամին, Միքայէլեան հիւանդանոցում. իսկ յուղարկաւորութիւնը հետեւեալ օրը, շաբաթ, փետրվարի 3-ին, Միքայէլեան հիւանդանոցի մատուռից դէպի Վանքի աւագ եկեղեցին առաւօտեան 10 ժամին: Թաղումը Խօջիվանքի հանգստարանում: 1—1

Վշտահար Սիմոն Հախնազարեանցը, Նինա Վարժանեանցը, Սօֆիա, Յարութիւն, Մարիամ, Արուսեակ Հախնազարեանցները ցաւօք սրտի յայտնում են, առաջինը իր թանկագին դստերը, երկրորդը և վերջինները իրանց անմոռանալի քրոջ

Շուշանիկ Հախնազարեանցի

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ փետրվարի 1-ին: Ամբիծքը, շաբաթ, երեկոյեան ժամը 4-ին, իսկ թաղումը փետրվարի 4 ին, Մողնու ս. Գ. եկեղեցին, իր տնից, Панасевича ул. № 18, դէպի Խօջիվանքի գերեզմանատունը: տռ. 1—3

XXV ԱՂԲԻՒՐ XXV

Լոյս տեսաւ ՅՈՒՆՒԱՐԻ №-ը:

Մանրամասնութիւնները կարդալ «Մշակի» կիրակի օրւայ №-ը (փեւրւարի 4-ին):

Իսկ այժմ հայ ընթերցողը հրաւիրւում է ուղարկել 50 կ., որին կուղարկեն «Աղբիւրի» և «Գեղափնջիկի» յունւարի №№-ը, այն պայմանով, եթէ գտնելու լինեն, որ «Աղբիւրը» և «Գեղափնջիկը» շքեղ են և բազմաբովանդակ, ուղարկեն եւս 4 ր. 50 կ. և ամբողջ տարով բաժանորդ գրւեն. հակառակ դէպքում վերադարձնեն մեզ №№-ը և յետ ստանան իրանց 50 կոպէկը:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «АГБЮРЪ» կամ «ТАРАЗЪ».

(տռ.) 1—1

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.
Բժ. Ֆ. Վ. ՉՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.
Բժ. Մ. Ի. ԽԱՆՋԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բգի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.:
Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.
Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բգի և ականջի, երկ. ըեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.
Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիպնօզով ամենայն 4—5 ժ.
Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.
Բժ. Ա. Տ. ՐՕԶՄԱՐԻՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք 4—5 ժ., երեք. շաբ. 3—4 ժ.:
Բժ. Ն. Ի. ՆԷՐՈՒՅՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.
Բժ. Ա. Ա. ՆՈՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ., չորեք., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.:
Բժ. Զ. Ֆ. ՆԵՎՁՕՐՕՎ.—Առամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.
Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ } Կլինիքական անալիզ
Բժ. Կ. Ի. ՉՈՒԴՆՕՎՍԿԻ }
Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, էլեկտր. 4—6 ժամ.
Մ. Ն. ԳՕՐՕԴՑԵՎԱ.—Մասսաժ. 11—4. ժ.
Ս. ԽԱ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.
Բժ. Կ Գ, ԳՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 12—1 ժամը:
Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երեխ., երեքշ, հինգշ. շաբ. 4—5 ժամը:

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անզգամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ատամների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան:

տռ. (ա. օ.) 57—144

Կիրակի, փետրվարի 4-ին
Արտիստական ընկ. դահլիճում
Հայուհեաց Որբախնամ
Ընկերութեան վարչութիւնը
ՏԱԼԻՍ Է
ԵՐԵԿՈՅԹ

Որբանոցի բացման առիթով սկզբնական ծախսերը հոգալու համար:

Երեկոյթի ծրագիրն է հետեւեալը.

I. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԱՍ

Բարեհաճ մասնակցութեամբ տիկին Վազօլի Բալբաշևսկիի, Նեւզելսկիի և պ. պ. Մօդեստովի, Աբէլեանի, Արաքսեանի, Ադամեանցի, Դօլուխանեանի և Ծովեանեանի:

II. ԲՆՈՐՈՇ ՊԱՐԵՐ (զգեստներով)

III. ՎԻՃԱԿԱԽԱՂ դիմակահանդէս և պարահանդէս:

Դիմակաւորվել կարելի է գիշերվայ ժամի 12-ից յետոյ, Արտիստական ընկ. առանձնասենեակում: Ցանկացողներին կը տրվեն վարձով զգեստներ և դիմակներ:

Սկիզբը $8^{1}/_{2}$ ժամին երեկոյեան:

Տոմսակները վաճառվում են Սուզանաճեանցի երաժշտական մագազինում (Երևանեան հրապ.), Ռեվերի ծաղիկների մագազինում (Գօլօվինսկի պր.), երեկոյթի օրը թատրօնի կասսայում:

(Ե. ու. Կ.) 2—3

ԱՅՍՕՐ,
Ուրբաթ, փետրվարի 2-ին
Լոյս տեսաւ
№ 9 „ՀԱՅԵԼԻ“ № 9
ԵՒ
№ 2 Գեղարւեստական նկար պրեմիան № 2
ԱՌԱՏՈՒԹԻՒՆ

Համարը պրեմիայով արժէ 30 կոպ., առանց պրեմիայի—10 կոպ.:

Պրեմիան առանձին 50 կոպ.:

տռ. 1—1

ԿՕՇԻԿՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

(1901 Թ. արժանացաւ մեդալի)

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ ԹԷ տղամարդկանց և թէ կանանց նուրբ տեսակի

ԿՕՇԻԿՆԵՐԻ

ԳՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ

Պատուէրները կատարվում են բարեխղճութեամբ և արագութեամբ: Վէլեամինօվսկայա փողոց, տ. Խուրօեվի:

Դարչինեան

տռ. (ա.օ.) 12—12

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական հոսանքների բնաւորութիւնը. Վերջին տեղեկութիւններ. Ընտրութիւնները Կովկասում. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Մամուլ. Եւրօպական պատերազմ. Ֆեմինիզմի պաշտպաններին. Ներկայացուցչական կառավարութիւն. Կեանքի ճանապարհին. Նամակ Նոր-Բայազէտի գաւառից. Նամակ Ախալցխայից. Վերակազմեալ հնչակեանները. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

II

Ամենամեծ պակասը, որ մենք համարում էինք էական ներկայ ընտրութիւնների ժամանակ, այն էր, որ թէ ինքը հասարակութիւնը և թէ Պետական Դուման ճիշտ գաղափար կազմէին ժողովրդի իսկական պահանջների ու սպասելիքների մասին:

Եւ այդ պատճառով կարևոր էինք համարում, որ պարզված լինեն այն հասարակական հոսանքները, որոնք գոյութիւն ունեն իրականութեան մէջ:

Շնորհիւ սխալ լօզունգների կարելի եղաւ պարզել միայն մի մասը այն բանի, ինչ որ ցանկալի էր, իսկ մթութիւններ մնացին մեծ ծաւալով:

Ո՞վ կարող է, օրինակ, բացատրել, թէ ում տուին իրանց ձայները վրացի կամ հայ ազատամիտները, ծայրայեղները և պահպանողականները: Մի՞թէ նրանք միացան մի կուսակցութեան մէջ: Միթէ զանազան քաղաքական իդէալներ ունեցող մարդիկ համախմբվեցին միասին, ընդհանուր անունների շուրջը:

Այն հանգամանքը, որ մեզանում մի կուսակցութեան մէջ կարողանում են միանալ քաղաքական տարբեր դաւանանքների մարդիկ՝ ծայրայեղ ազատականներ, յեղափոխականներ, պահպանողականներ, կղերականներ և նոյնիսկ սև հարիւրեակայիններ, մի տարօրինակութիւն է, որը պարզ ապացուցում է մեր երկրի ընտրութիւնների աննախանձելի վիճակը և հասարակական հոսանքների մասին եղած հայեացքների մթութիւնը:

Ընտրողը գնում է քուէ տալու, ներկայացուցիչ ընտրելու, իր կամքը ուրիշին յանձնելու և ինչ է անում: Տալիս է այդ քուէն ում որ չէ սիրում. ներկայացուցիչ է ընտրում նրան, ով բոլորովին ուրիշ շահեր պէտք է պաշտպանի. իր կամքը յանձնում է այնպիսի մէկին, որ ամենեւին չէ ճանաչում այդ կամքը:

Դա տխուր երեւոյթ է:

Տխուր է, որովհետև նախ և առաջ կեղծ է. տխուր է, որովհետև մթնացած է հասարակական հոսանքների գիտակցութիւնը. տխուր է, որովհետև չար ու բարին, սև ու սպիտակը միացել-խառնվել են միասին. տխուր է, որովհետև ոչ ոք չը գիտէ, թէ ով է նրա գաղափարական բարեկամը ու թշնամին, համախոհը ու հակառակորդը:

Այստեղ կորչում է բուն քաղաքական կուսակցութիւնների գաղափարը և առաջ է գալիս թայֆայականութիւն, որը կախված է անձերից և պատահական հանգամանքներից:

Սակայն միթէ մեր երկրի ինտելիգենցիան չը պէտք է սթափվի, չը պէտք է լուրջ հոգածութեան առարկայ դարձնի նրա առաջ կատարվող ցաւոտ խոցերի բուժելու հարցերը:

Մենք նոր ենք ոտք կոխում դէպի պարլամենտական-ընտրական գործի շեմքը և արդէն ցեխոտել ենք ընտրութեան գաղափարը, ծառայեցնելով նրան ամեն տեսակ նպատակի, բացի այն մեծ և վեհ նպատակից, որին պէտք է իսկապէս ծառայեն ընտրութիւնները:

Արդարև ինչ վիճակ ենք տեսնում իրականութեան մէջ:

Իրաւատէր մարդկանց ամբողջ շարքեր չեն գնում դէպի ընտրական տուփերը և չեն յայտնում իրանց կամքը, իսկ նրանք, որոնք գնում են, ներկայանում են իբրև պատասխանատւութեան հոգուց զրկւած մարդկային խմբեր, որոնք ձայն են տալիս անգիտակցօրէն և յաճախ բոլորովին հակառակ այն բանի, ինչ որ կազմում է նրանց ներքին բովանդակութիւնը և տրամադրութիւնը:

Աննորմալ է այդ դրութիւնը և չափազանց տխուր:

Հասարակութիւնը պէտք է միջոցներ ձեռք առնի գիտակցական դարձնելու իր համար ընտրութիւնները, պէտք է հեռու քշէ անտարբերութիւնը դէպի հանրային գործերը և կարողանայ զսպել այն բոլոր շահագործողներին, որոնք խեղաթիւրում են ընտրական գործի էութիւնը և ցեխոտում նրա նշանակութիւնը:

Ընտրական գործը չափազանց վեհ և սուրբ գործ է, և մենք իրաւունք չունենք անտարբեր վերաբերվել դէպի նրա վիճակն ու գործադրութիւնը:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշի, 26 յունվարի

Ամսիս 24-ին Թիֆլիսից կարևոր գործով գնում էի Շուշի: Հասնելով Եւլախ կայարանը, տեսայ այդտեղ հաւաքված մօտաւորապէս յիսուն հոգի ճանապարհորդներ, որոնք նոյնպէս պէտք է ճանապարհվէին դէպի Շուշի, բայց լսելով որ Եւլախից մօտ տասներկու վերստ հեռաւորութեան վրա կողոպտել են 2 դիլիժաններով եկող 24 հայերի, չէին վստահանում ճանապարհվելու, յայտնելով թէր ու դէմ կարծիքներ. Նոյն իսկ մի քանիսը խորհուրդ էին տալիս գնալ Գանձակի ճանապարհով, չը նայած ցուրտ եղանակին և ճանապարհի հեռաւորութեանը: Ես համոզեցի նրանց, որ առանձին մի երկիւղ չը կայ, և դա աւազակների գործ է, որից յետոյ մարդիկ մի կերպ վախվխելով, ես և նրանց հետ, ճանապարհվեցինք և երկու ժամից յետոյ հասանք այնտեղ, որտեղ պատահել էր դէպքը: Մանրամասնութիւնները պատմեցին իրանց կողոպտվողները, որոնցից երկուսը [illegible] պրիստաւի հետ եկած այդտեղ սպասում էին գաւառապետին:

«Մենք թւով 24 հոգի գալիս էինք դիլիժանով. մութը հասաւ Բարդայի մօտ. մօտաւորապէս ժամի ութին, երբ հազիւ մնացել էր մի երկու ժամվայ ճանապարհ, մեր առաջը դուրս եկան 2 զինված թուրքեր, կանգնեցրին դիլիժանները և սկսեցին մէկիկ մէկիկ պտրել գրպանները, առնելով ամենավերջին եղած կոպէկները: Մեզ հետ կային կանայք ևս, որոնց գլխի զարդերը ևս կողոպտեցին: Կողոպուտի ժամանակ, երբ նրանց գլուխը խառն էր, դիլիժաններից մէկը, օգտվելով հանգամանքից, մտրակեց ձիերին և կարողացաւ ազատել մօտ տասն և երկու մարդու (դիլիժանները երեք էին). հիմա սպասում ենք գաւառապետին. տեսնենք ինչ կարգադրութիւն պէտք է անէ»:

Սոյն դէպքը սարսափ է գցել թէ Շուշուց եկողների և թէ Եւլախից ճանապարհվողների վրա. այդ երևում էր մեզ շարունակ պատահողների մանրամասն հարց ու փորձերից. և եթէ լուրջ ուշադրութիւն չը դարձնվի և սոյնանման դէպքերի առաջն անմիջապէս չառնվի, կարելի է համարձակ ասել, որ Շուշի-Եւլախ ճանապարհը կրկին վտանգված կարելի է համարել, որը ցանկալի չէ, կարծում եմ, թէ հայերի և թէ թուրքերի համար, ևս առաւել, որ այժմս յարաբերութիւնները երկու ազգերի մէջ բարեկամական են, և այդ երևում էր այդ դէպքից յետոյ ճանապարհին մեզ պատահող թուրքերի վերաբերմունքից, որոնք իրանց խորին զզւանքը և զայրոյթն էին յայտնում:

Հասնելով Շուշի մեզ ասացին, որ դէպքի վայրն են գնացել հայ-թուրքական խաղաղարար կոմիսիայի անդամները դէպքի մանրամասնութիւնները իմանալու և միջոցներ ձեռք առնելու, որպէս զի գտնվեն աւազակները ու վերադարձվի կողոպուտը:

Լօրիկ

Պետերբուրգ, 25 յունվարի

Վերջին տարիներս Պետերբուրգի համալսարանի ռեկտորը մի շարք խնդիրներ է ստացել ճեմարանաւարտներից և ներսիսեանաւարտներից ընդունելու նրանց համալսարանի իսկական ուսանող: Մօտիկ ծանօթ չը լինելով վերոյիշեալ դպրոցների ծրագրների հետ, ռեկտորը մի քանիսներին բոլորովին մերժել էր, միւսներին ազատ ունկնդիր ընդունել, երրորդին իսկական ուսանող միայն լատիներէնից քննութիւն տալու պայմանով:

Այդպիսի աննորմալ դրութեան վերջ տալու համար Պետերբուրգի համալսարանի պրոֆեսորական խորհուրդը առաջարկում է յարգելի պրոֆ. Մառին մի զեկուցում ներկայացնել Կովկասի միջնակարգ դպրոցների մասին, որի հիման վրա պրոֆեսորական խորհուրդը կարողանար վերջնական եզրակացութեան գալ:

Այդ առաջարկութեան հիման վրա պր. Մառը մէկ մանրամասն զեկուցում է ներկայացնում, որտեղ քննելով կովկասեան բոլոր միջնակարգ դպրոցների, ի միջի այլոց և մեր թեմական դպրոցների և ճեմարանի, ծրագրները, առաջարկում է իսկական ուսանող ընդունել հայկական միջնակարգ դպրոցներից միայն Գէորգեան ճեմարանը և Ներսիսեան դպրոցը աւարտածներին: Պրոֆեսորական խորհուրդը ընդունում է Մառի առաջարկութիւնը և համապատասխան որոշում է կայացնում: Այդ որոշման հիման վրա արդէն բոլոր ազատ ունկնդիր ընդունված ներսիսեանաւարտներին և ճեմարանաւարտներին ընդունեցին իբրև իսկական ուսանող:

Մի կողմը թողնելով այդ մեզ համար միանգամայն ուրախալի երեւոյթի ընդհանուր քաղաքական և հասարակական պատճառները, չի կարելի զանց առնել և այն խոշոր դերը, որ խաղաց պր. Մառը այդ հարցի աջող լուծման մէջ: Հարիւրաւոր երիտասարդներ իրանց բարձրագոյն կրթութեամբ խոշոր չափով պարտաւոր կը լինեն յարգելի պր. Մառին:

(«Ժամ»)

Թէհրան, 30 յունվարի.—Շահը, զիջելով մէջլիսի խնդիրքներին, համաձայնեց շնորհել մինիստրների պատասխանատւութիւն, տեղական ինքնավարութիւն, ադմինիստրացիայից դատարանի բաժանում և պաշտօնանկ անել Նաւսին իր օգնականներով: Քաղաքում հանգստութիւն է տիրում:

(«Հ. Գ.»)

Բագու, 31 յունվարի.—Քաղաքապետը այցելեց Բալախանի և, հանգիստ խօսակցելով գործաթողների հետ, յորդոր կարդաց վերսկսել աշխատանքները, մատնանշելով գործադուլից առաջացած վնասը, գործադուլ, որից վնասվում է ամբողջ պետութիւնը, արդիւնաբերողները և բանւորները: Ծանօթանալով բանւորների պատգամաւորների հետ, քաղաքապետը եկաւ այն եզրակացութեան, որ անհնարին է նրանց բաւարարութիւն տալ:

Գործադուրկները թռուցիկներ են հրատարակել, որոնցով իրանց սրտնեղութիւնը և յուզմունքն են յայտնում գործադուլից, քանի որ նրանք չունեն և ոչ մի աշխատանք, և գործաթողներին հրաւիրում են խորհրդակցել միասին:

Աշխատանքները վերսկսվեցին Մօսկովեան-Կովկասեան ընկերութեան մէջ, թէև բանւորների պահանջներին բաւարարութիւն չէ տրված:

(«Հ. Գ.»)

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը ուղարկել է բոլոր պատուիրակներին, որոնք ընտրվել են Պետական Դումայի անդամ ընտրելու համար Թիֆլիսի կողմից, հարցափորձելու թերթեր հետեւեալ հարցերով՝ 1) անունը, հօր անունը և ազգանունը, 2) դաւանանքը, 3) տարիքը, 4) դասակարգը, 5) կրթութիւնը, պաշտօնը, կամ պարապմունքը, 6) ո՞ր ժամանակից է ապրում Թիֆլիս քաղաքում, 7) չի՞ ենթարկվել արդեօք դատաստանական պատասխանատւութեան, 8) հասցէն և 9) ընտրողական ցուցակի համարը:

Նահանգական ընտրողական վարչութիւնը բողոքագրեր է ստացել 1, 3, 5, 7 և 10-րդ քաղաքամասերի ընտրողների մի քանիսից. ընդհանուր առմամբ այդ բողոքագրերում մատնանշվում է որ օգտված է մեռած ընտրողների ծանուցագրերից, որ միևնոյն անձնաւորութիւնը երկու անգամ է բիւլլետէն տուել, որ մի քանի ընտրողներ մասնակցել են բանւորական կուրիայում և բնակարանային ցենզի վերաբերմամբ: Վերջին հանգամանքի ընտրութիւնները բեկանելու նկատմամբ նշանակութիւն չունի, որովհետև ընտրողների ցուցակները հաստատել է առանձին վարչութիւն: Ընդամենը ստացվել են 10 բողոքագրեր: Այդ բողոքագրերը քննելու համար մասնաժողովի նիստը կայանալու է այս շաբաթվայ վերջում:

Արթւինի վիճակում պատուիրակ է ընտրվել հարկային տեսուչ Մակաչէվը, որ անկուսակցական է:

Լուրերին նայած սօցիալ-դեմօկրատական անդամները միջնորդութիւն են յարուցել բեկանելու 3, 5 և 7-րդ քաղաքամասերի ընտրութիւնները:

Սղնախ, յունվարի 30-ին

Կիրակի, յունվարի 28-ին, կայացաւ Պետական Դումայի համար պատուիրակի ընտրութիւնը Սղնախի կողմից: Սօցիալ-դեմօկրատիայի կողմից թեկնածու էր առաջարկված Դաւիթ Նադիրաշվիլի, իսկ Դաշնակցութեան կողմից՝ Ամիրան Շահվերդեան: Նադիրաշվիլին ստացաւ 322 ձայն, Շահվերդեան՝ 258: Ընտրված յայտարարվեց առաջինը: Գաւառում ընտրված հինգ պատուիրակներն էլ պատկանում են սօցիալ-դեմօկրատիային: Նադիրաշվիլուն ձայն տուեց Նուխրեանի արուարձանի, Ծոտորի և Մաշարօ գիւղերի (սրանք միացած են Սղնախի հետ) վրացիները, իսկ Շահվերդեանին՝ քաղաքի հայերը: Նոյն Նադիրաշվիլին պատուիրակ ընտրվեց և անցեալ տարի:

Այստեղից մի խումբ անձինք խնդիրք ուղարկեցին Թիֆլիսի ժողովրդական զուարճութիւնների ընկերութեան, խնդրելով ճիւղ բանալ Սղնախում:

N. N.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յունվարի: Պատուիրակների ընտրութիւնները: Մինչև յունվարի 31-ը շրջանների հողատէրերի, քաղաքային ընտրողների և բանւորների լիազօրների համագումարներին ընտրված 5526 պատուիրակներից 1345 հոգին (24%) միապետականներ են—սրանցից 28-ը պատկանում են ռուս մարդկանց դաշնակցութեան, 832 հոգին (15%) չափաւորականներ են, սրանցից 440-ը՝ հոկտեմբերականներ, 2330 հոգին (42%) ձախակողմեաններ, սրանցից կադէտները կազմում են 594 հոգի, 257-ը՝ սօցիալ-դեմօկրատներ. 432 հոգին պատկանում են ազգային կուսակցութիւններին, 3596-ը անկուսակցականներ են. իսկ 227 հոգին յայտնի չէ որ կուսակցութեանն են պատկանում:

ՄԱՄՈՒԼ

«Телеграфъ» լրագրի մէջ Մաքսիմ Կովալեվսկին, խօսելով այն տրամադրութեան մասին որ տիրում է ընտրող ժողովրդի, գլխաւորապէս գիւղացիութեան մէջ, պատկերացնում է այդ կամքը, որից բաղկացած կը լինի առաջիկայ Դուման, որ «կորչի սահմանադրութիւն» կոչի հետ միաժամանակ այնտեղ աւելի հուժկու ձայնով կը լսվէ «կեցցէ սահմանադիր ժողովը»: Սակայն յարգելի պրօֆեսորը չէ կարծում, որ այդ երկու կոչերն էլ ճնշող մեծամասնութիւն կազմեն:

Մենք այդ չենք կարծում,—ասում է նա.—առողջ բանականութիւնը կը գերակշռէ, գուցէ ոչ միանգամից, այնուամենայնիւ նա կը գերակշռէ արիւնաքամ եղող հայրենիքի ծանր վէրքերի առջև, ի նկատի առնելով Դումայի բացակայութեան երկար շրջանը և ուշադրութեան առնելով ժողովրդական կարիքները և վէրքերը հոգալու անհրաժեշտութիւնը:

Դումայի առաջին տրամադրութիւնը թերևս կը լինի փոթորկոտ, բայց հոգեկան հաւասարակշռութիւնը աստիճանաբար կը վերականգնվի և Դուման կը սկսի իր շինարար աշխատանքները:

Ապա յոյս յայտնելով, որ Դումայի անդամների մեծամասնութիւնը կըմբռնէ, որ հարկ չը կայ անխնայ քննադատութեան ենթարկել մինիստրների կողմից առաջարկված օրինագծերի քննութեան ժամանակ կառավարութեան բոլոր գործունէութիւնը, այնուամենայնիւ նա կարծում է, որ

Դուման պէտք է աշխատէ դնել իր veto-ն մեր Սօլոնների աշխատանքների վրա, այլ ոչ թէ նրանց դուրս քշէ միանգամից իրանց գրաւած դիրքերից: Թող ամբողջ աշխարհին յայտնի դառնայ նախ նրանց ագիտութիւնը, անպարծութիւնը և թող ժամանակին բանալով ռուս բիւրօկրատիայի անանկութիւնը լուրջ շնորհակալութեան արժանանայ Դուման թէ ժողովրդի և թէ Ցարի կողմից: Իսկապէս Դումայի ամբողջ ույժը զուտ բարոյական ույժն է, որը կայանում է ժողովրդի և բարձրագոյն իշխանութեան տածած վստահութեան մէջ: Հարկաւոր է խուսափել կասկածներ յարուցանելու որոշ շրջաններում ներկայացուցիչների պահանջների անկեղծութեան մասին:

Դրանից պէտք է խուսափել: Խուսափել մանաւանդ անհրաժեշտ է, որպէսզի Դուման իր գոյութիւնը ամրապնդէ և համոզէ ամենքին, որ ինքը մտածում և զգում է այնպէս ինչպէս ժողովուրդն է զգում ու մտածում, և աշխատում է հոգալ ժողովրդի կարիքները:

Ի հարկէ, անվերջ, հասարակական կարծիքի հակառակ, շարունակել իր գործունէութիւնը կառավարութիւնը չէ կարող: Եւ երբ ժողովուրդը հասնի այն գիտակցութեան, որ «պետական երեխաները» կառավարելու ընդունակութիւն չունեն, նրանց կը հեռացնէ, և առաջ կը գան այնպիսի մարդիկ, որոնք աւելի են փորձառու և ընդունակ, աւելի են ըմբռնում ռուսաց իրականութիւնը: Բայց որպէս զի հասարակական կարծիքը հասնի այդ գիտակցութեան, անհրաժեշտ է, որ վերանան մեր կուսակցական ներքին երկպառակութիւնները, որոնք չեն ուզում հաշտվել գոյութիւն ունեցող կարգերի հետ, «սահմանադրական թագաւորութեան ու բիւրօկրատիայի ինքնակալութեան հետ»: Կառավարութիւնը հէնց ինքն է մեզ ցոյց տալիս այն ճանապարհը, որով պէտք է գնալ:

Նա,—ասում է Կօվալևսկին,—կուսակցութիւններից մի քանիսին խրախուսանքի արժանի է յայտարարել, իսկ միւսներին, նոյն իսկ ընտրողներին իրանց թեկնածուների անունները գրված բիւլլետէններ ուզարկելու իրաւունքից զրկված: Ջեմստվօյի դէմ նա յարուցել է նոր խնդրակալներ: Թող ուրեմն այդ խնդրակալների դէմ դուրս գան զեմստվօները իրանց խառնուած շարքերով, ընտրողական բլոկի նման համաձայնութիւններ կայացնելով:

*

Կանանց իրաւունքի հաւասարութեան դաշնակցութեան բիւրօն սօցիալիստ յեղափոխականների կուսակցութեան կենտրօնական կօմիտէտին ներկայացրել է հետեւեալ յայտարարութիւնը.

«Մենք հաւատում ենք, որ սօցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնը մտցրած լինելով իր ծրագրի մէջ բոլոր քաղաքացիների քաղաքական և քաղաքացիական իրաւունքների հաւասարութիւնը, առանց սեռի տարբերութեան, անդրդւելի կերպով կը հետեւի այդ սկզբունքին: Բայց, մենք չենք թաքցնում մեզնից և այն, որ հասարակութեան և ժողովրդի մէջ դեռ ևս կան բազմաթիւ նախապաշարմունքներ, որոնք հիմնված են սովորութիւնների վրա և վաղուց ի վեր արմատացել են կնոջ մասին ունեցած այն միակողմանի հայեացքի մէջ, թէ կինն իրաւունքի անընդունակ մի էակ է և կարօտ տղամարդու խնամակալութեան: Այդ նախապաշարմունքին մենք հանդիպեցինք և Պետական Դումայի մէջ և, դիմելով այժմ սօցիալիստ-յեղափոխականների կենտրօնական կօմիտէտին, առաջարկում ենք շրջաբերականներով յայտնել կուսակցութեան գաւառական բաժանմունքներին, որպէսզի կանանց քաղաքական և քաղաքացիական իրաւունքներ տալու հարցը կարելւոյն չափ յաճախակի պարզաբանվէր և ագիտացիաներում ու նախընտրական ժողովներում սօցիալիստ-յեղափոխական կուսակցութեան անդամները աշխատէին առաջ տանել»:

*

Արդէն լոյս է տեսել «Մուրճ» ամսագրի 1907 թւի առաջին համարը: Ի միջի այլոց արժանի է ուշադրութեան Մ. Կ.-ի «Հզօրների գործերից և խոստովանութիւններից» յօդուածը:

Մի բան, որ իսկոյն աչքի է ընկնում, այդ ամսագրի փոխված շապիկն է:

Այդ առիթով, «Խմբագրութեան կողմից» տրված բացատրութեան մէջ ասված է.

«Մուրճ»-ի շապկի վրայ տպված այլեգորիան (այլաբանութիւնը) աւելորդ չենք համարում մի քանի խօսքով բացատրել: Գիտական ոգին իր ջահով լուսաւորում է այն նոր ճանապարհը, որ ցոյց տուին Դարվինի և Մարքսի վարդապետութիւնները: Նա է տանում դէպի լուսաւոր ապագան, կապիտալիստական քաղաքի միջից անցնելով: Յաղթութեան հրեղէն կառքի միայն այն ժամանակ, երբ մարդկութիւնը կընթանայ այդ նոր ճանապարհով: Հին կեանքի ընտիցված նախապաշարմունքների ժայռանման պատը խորտակելով իր մուրճով մարդկութեան աշխատաւոր մասը, նոր սերունդը ու կանանց սեռին, ինչպէս և քնից զարթած և շղթաները փշրած աւելի անսանձ ժողովրդը, ցոյց է տալիս այդ նոր կեանքի ուղին: Այդ է մեր այլեգորիայի իմաստը:

Մեր այդ իղձն նախ պատկերացրեց իբրև բարելիէֆ քանդակագործ Մ. Միքայէլեանը. սակայն Թիֆլիսում դժուար եղաւ մաքուր կլիշէ շինել տալ այդ բարելիէֆից և մենք մի քիչ փոփոխած նկարել տուինք այդ տեխնիկօրէն աւելի դիւրին ձև տալով նրան:

1907 թւի բաժանորդագրութիւնը բանալով «Մուրճ»-ում յայտնել էինք մեր մասնագէտներին ամսագիրը պատկերազարդ դարձնելու աջող գնալ: Բայց մեր հրապարակախօսական սեպուհ պարտքը և կոչումը կատարելով, կրկին յայտարարեցինք Դաշնակցութեան նման մի անեղ կազմակերպութեան ոճրագործ արարքների, նրա այլասերող և անպատասխանատու բռնակալութեան դէմ և դրանով յարուցինք այդ ընկերութեան խուլիգանացած շատ գործակալների կատաղի հալածանքը... Դաշնակցական травля-ն, որ մրցորդական հալածանքը ամենուրեք, ուր տարածված է անգիտակից հայ ժողովրդի վրայ դրա ճիրանեթական ցանցը, անհետևանք չը մնաց... Մենք այդ գիտէինք, բայց մեր դեվիզն է եղել՝ գերադասել վտանգալից ազատութիւնը զանազան համակերպութիւններից:

Malo periculosam libertatem!

Ահա այսպիսի պայմանների մէջ է թևակոխում «Մուրճ» ամսագիրը 1907 թւականը:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Հաագայի երկրորդ կօնֆերենցիան և զինաթափման բարդ խնդիրը եւրոպական մամուլի մէջ հրապարակ են հանում մի շարք յօդուածներ այս խնդրի—հնարաւոր է արդեօք այժմս պատերազմը եւրոպական պետութիւնների մէջ:

Սօցիալիստ գրող Պօլ Լաֆարգը «Humanité»-ի վերջին համարներից մէկում այդ նիւթին նուիրում է մի մանրամասն առաջնորդող:

Հաագայի կօնֆերենցիայի մօտիկութիւնը առաջ կը քշէ,—ասում է Լաֆարգ,—այն հարցը, թէ եւրոպական ազգերի մէջ հնարաւոր է հաստատել ընդհանուր համաձայնութիւն: Միայն, նախ և առաջ, պէտք է վճռել մի ուրիշ խնդիր.—կարող են արդեօք եւրոպական ժողովուրդները արձակել, ընդհանուր համաձայնութեամբ, ազգային զօրքերը և նրանց փոխարինել պրօֆեսիօնալ զօրքերով, որոնց քանակութիւնը կանոնաւորված լինէր դիպլօմատիկ ճանապարհով, համաձայն իւրաքանչիւր երկրի կարիքներին:

Այս խնդիրը ունի առանձին հետաքրքրութիւն սօցիալիստիկ տակտիկայի համար. իսկ այս հարցին կարելի է պատասխանել այն ժամանակ միայն, երբ կը քննենք եւրոպական պատերազմի հաւանականութիւնները և երբ կը վերլուծենք ազգային զօրքերի օգտակարութիւնը անտեսական տեսակէտից:

Եթէ բռնանչի պատերազմը կամ առհասարակ եւրոպական պետութիւնների մէջ զինված կօնֆլիկտը եւրոպական տերիտօրիայի վրա հնարաւոր են, այն ժամանակ աւելորդ է մինչև անգամ խօսել ազգային զօրքերի նուազման մասին. պէտք է, ընդհակառակը, խոստովանել նրանց անհրաժեշտութիւնը և իւրաքանչիւր պետութեան ուժերի կորստաբեր աճեցումը մինչև վերջին սահմանը: Այսպէս, ուրեմն, պէտք է նորից դնել հարց.—հնարաւոր է եւրոպական պատերազմը:

Մեր օրերում պատերազմը իր աւերածութեամբ, անգթութեամբ և արիւնհեղութեամբ պէտք է շատ հեռու թողնէ իր ետևից անցեալ դարի պատերազմները: Այժմեան պատերազմը կը հանէր իր զօրերը մարդկային բոլոր դասակարգերից: Եւրոպական վերջին մեծ պատերազմը—1870—71 թ.—դուրս շպրտեց պատերազմի դաշտը հարիւր հազար զինւոր միայն, այնև բանւոր և գիւղական միջավայրից:

Բուրժուազիան, գոնէ Ֆրանսիայում, հնարաւորութիւն ունեցաւ փրկել իր անձը ծանր պարտականութիւններից:

Բայց այժմ բուրժուաներն էլ չեն կարող այլ ևս ազատվել զինուորական ծառայութիւնից. նրանք դարձել են «chair à canon» (միս թնդանօթի համար), իսկ նրանց գոյքին, որը նրանց համար գրեթէ աւելի թանգ է նոյն իսկ կեանքից, սպառնում է կորուստ, եթէ միայն կը բռնկէ պատերազմ: Պատերազմի անը միացնում է եղբայրաբար Ֆրանսիայի և Գերմանիայի բուրժուաներին, և միացնում է աւելի սերտ, քան արեան կապերը:

Ֆրանսիայի և Գերմանիայի կառավարիչները վախում են պատերազմից ճիշտ այնպէս, ինչպէս և կառավարվողները: Եւ նրանք իրաւունք ունեն, որովհետև պատերազմը հաւասար է անխուսափելի կործանման, թէ յաղթողների և թէ յաղթվածների համար: Եւրոպական պատերազմի անմիջական հետևանքը կը լինէր սովը: Քաղցած բանւորները կունենային իրանց ձեռքերում հրացաններ. Qui a des fusils, a du pain (ով հրացան ունի, նա ունի հաց),—ասել է Բլանկի: Պատերազմը իր ետևից կը բերէր սօցիալական բռնկումներ կապիտալիստիկ աշխարհի մէջ: Եւրոպայի ոչ մի կառավարութիւն կը վճռէր իր վրա վերցնել այդօրինակ պատասխանատուութիւն և գնալ դէմ-յանդիման այդօրինակ վտանգների:

Եւրոպական պատերազմի անհնարաւորութիւնը պարզապէս հաստատվում է վերջին ժամանակներս տեղի ունեցած անցքերով: Պետութիւնների մէջ ծագած անհամաձայնութիւնները, որ առաջ լուծվում էին զէնքով, այժմ քննութեան են ենթարկվում դիպլօմատիայի կողմից, ինչպէս, օրինակ, Մարօկկօյի գործը: Եւրոպական պետութիւնները այնքան էին վախենում պատերազմից, որ անմիջապէս կազմակերպեցին Ալխեսիրասում третейскій դատարան, նոյնչափ լաւ, ինչպէս և Հաագայում:

Այն պետութիւնը, որը կը խախտէ եւրոպական խաղաղութիւնը, կը յայտարարվի իբրև ընդհանուր թշնամի: Ներկայումս հնարաւոր են միայն կօլօնիալ պատերազմներ Աֆրիկայի և Ասիայի կիսաբարբարոս ժողովուրդների դէմ:

Ռուս-եապօնական պատերազմը անհնարին դարձրեց, այսուհետև, պատերազմները Հեռաւոր Արևելքում աշխարհային (міровыми) պետութիւնների մէջ՝ Չինաստանը բաժանելու առիթով: Եւ, ի բարօրութիւն լուսաւորեալ ժողովուրդների պրօլետարիատի, եւրոպական աւազակները շուտով աքսորված կը լինեն իրանց սեփական գաղութներից:

Այսպէս՝ մեր կարծիքով, այժմս եւրոպական պատերազմի մասին վտանգ չը կայ և եւրոպական պետութիւնները կարող են Հաագայի ապագայ կօնֆերենցիայում գալ ընդհանուր համաձայնութեան՝ ազգային զօրքերի կրճատման և մինչև անգամ ոչնչացման վերաբերութեամբ:

Այս վերջին 2—3 տարում մի զարմանալի հոսանք է առաջ եկել Սուխումեան և Սև-ծովեան շրջաններում. երիտասարդ, ծեր, այրի, ամուսնացած բոլորը ուղևորվում են զանազան կողմեր ամուսնանալու: Այդպէս օտար տեղեր դիմելու գլխաւոր պատճառներից մէկն այն է, որ իրանց մօտ հարսնացուները շատ թանգ են, 300-ից մինչև 800 րուբլի, թէև օտար տեղերումն էլ շատ պակաս չէ ծախսվում, բայց կարծես ամուսնացողի սիրտը հովանում է ինքնախաբելով, որ ուր է հանում տեղացուց: Սկզբում գնում էին Ղրիմի կողմերը, իսկ վերջին ժամանակներս ուղղակի խմբային «արշաւանքներ» են գործում դէպի Գանձակ և ասում են, որ շատ էժան են պրծնում. բաւական է 50 րուբլի տալ ազգականներին, մի 50 րուբլի էլ քահանային, և նշանակութիւն չունի նոյնիսկ, թէ ծեր է և աղջիկը 17—18 տարեկան. il va très bien, և վերջանում է: Նոյնիսկ առաջ է եկել կօմմիսիօներութիւն. օրինակ եթէ մէկը լաւ ծանօթ է Գանձակի գաւառին, վերցնում է 100 րուբլի իւրաքանչիւր բաղդախնդրից միմիայն ուղեկցելու համար և տանում, ձեռաց ամուսնացնում առաջին պատահողի վրա. շատ անգամ այդ կօմմիսիօնները ագէնտներ ունին Գանձակում, ինքը «փօդրատը» վերցնում է իր վրա, ուղարկում և նամակով գործը տեսնում: Այնքան շատ եղաւ այդպէս գնացողների թիւը, որ սկսվեց կոչվել «հանքատեղի» և ամեն ոք շտապում էր, երբեմն նոյնիսկ նախանձ էր առաջ գալիս, որ իր հարևանը այդքան ծեր է և արժանանում է այդպիսի ջահել հարսնացուի:

Որպէսզի ներկայացրած լինեմ այդ «բաղդաւորված» հարսերի ապագայ վիճակը, կը բաւականանամ պատմելով տասնեակներից մի քանի օրինակ, որոնց ինքս վկայ եմ: Մէկը, որը կը լինէր 45 տարեկան մի մարդ, վարակված մի անբուժելի հիւանդութեամբ, գնում ամուսնանում է 30 տարեկանի վրա:

Երկրորդը, որը աղքատ մարդ է, գնում ներկայանում է իբր՝ հարուստ, ամուսնանում է 17 տարեկան աղջկայ հետ, որը գալով տեսնում է ոչինչ չը կայ, մտածելուց 2 ամսից յետոյ մեռնում է: Մի երրորդը, որը կը լինի 50 տարեկան, ամուսնացած, երեխաների հետ, կնոջից զզված լինելով գնում ինչ ինչ պատճառներ բերելով ամուսնանում է 22 տարեկան աղջկայ հետ, որին շարունակ ծեծելով հազիւ աջողվում է պահել իր մօտ:

Իսկ այսօր, որ բացակայ եմ այդպիսի բների վկայ լինելուց, ստանում եմ մի նամակ, որի միջից աւելորդ չեմ համարի քաղուածօրէն բերել այստեղ *) «Ս... գնաց Գանձակ մի քրիստոնեայ դարձած թիւրքուհու հետ ամուսնացաւ, որը հայ-թուրքական կոտորածների ժամանակ գերի վերցրածներից էր, երբ որ գիւղ բերին, պարզվեց, որ աղջիկը հիւանդոտ է, վերք ունի ոտերին, և նա խոստովանվեց, որ վարդապետը նրան փախցնելով պահել է և ինքը չի ուզում միայ տղի մօտ: Երկար զալմազալներից յետոյ աղջիկը յետ ուղարկվեց, իսկ Ս.-ն ուրիշ վկայական վերցնելով գնաց Գանձակ և մի ուրիշի հետ պսակվեց»:

Այդ սևագծումները մինչև երբ պէտք է մարդկութեան, մանաւանդ հայութեան բաղդը որոշողի դերը կատարեն: Ահա հայ կեանքից մի պատկեր, որը ցոյց է տալիս, թէ հայը որքան ընդունակութիւն ունի XX դարում ըմբռնելու individu-ի գաղափարը և պաշտպանում է սարկավաճառութեամբ: Կը խնդրէինք à la ֆէմինիստ հայ ինտելլիգենտներին իրանց բարեխնամ աչքը յառել դէպի այդ անկիւնները հրաժարվելով դաշլիճային լինելուց. դաշլիճներում և մանաւանդ թեանցում ժամանակ ամեն ոք կարող է ճառել. ներկայումս գործ է պահանջվում:

Աւելորդ չեմ համարում յիշել, որ, ինչպէս իմանում ենք, Սուխումեան շրջանում աղջիկ փախցնելը եռուն կերպարանք է ստացել և ոչ պակաս պատառներ են հասնում տեղական «ասպետներին»:

Հ. Թ.

Ժընև, յունվարի 24-ին:

---

*) Չեմ կասկածում, որ սխալ տեղեկութիւն լինի:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Այդ պատճառով էլ պայքարը պարլամենտում աւելի ու աւելի էր կորցնում իր սկզբունքային բնաւորութիւնը. նա հետզհետէ աւելի ինտրիգների կերպարանք էր ստանում, որոնց միջոցով մարդիկ ձգտում էին աստիճանների ու պաշտօնների հասնել, որպէսզի հնարաւորութիւն ստանան ոչ թէ պետութիւնը իրանց ուզածի պէս կառավարելու, այլ նրան շահագործելու: Դրա հետ միաժամանակ ընտրողական իրաւունքի սիստեմն էլ հետզհետէ ընտրող մասսաներին կաշառելու աստիճանին էր հասնում. քաղաքական կռիւը չարչիական սպեկուլյացիա դարձաւ:

Անգլիական պարլամենտարիզմը, կարծես թէ, անանկութեան էր մօտենում: Բայց իսկապէս պարզվեց, որ պարլամենտարիզմը մի այնպիսի ձև է ներկայացնում իրանից, որի բովանդակութիւնը շատ բազմատեսակ կարող է լինել: Ոչ թէ պարլամենտարիզմը անանկացաւ, այլ միմիայն կալուածատէրերի միահեծանութիւնը, որը պարլամենտարիզմի միջոցով էր իրագործութիւն ստացել:

Մենք արդէն նախորդ գլուխներից մէկում ասացինք, որ ներկայ դարի վերջերում կալուածատէրերի ու նրանց հետ կապված ֆինանսական արիստօկրատիայի հետ կողք-կողքի, նոր զօրաւոր դասակարգեր էլ առաջացան, որոնց շահերը միանգամայն հակառակ էին կալուածատէրերի շահերին: Ամենագլխաւոր նշանակութիւնը ունէր արդիւնագործական կապիտալիստների դասակարգի և արդիւնագործական պրօլետարիատի դասակարգի ծագումը: Վաճառականութեան և հողատիրութեան միջև բաւականին լաւ յարաբերութիւններ կային, իսկ արդիւնագործութիւնը հողատիրութեան հետ բոլորովին չը հաշտվեց: Որչափ աւելի զօրաւոր կերպով էր զարգանում արդիւնագործութիւնը, այնչափ աւելի էր զգալի դառնում արդիւնագործական բուրժուազիայի համար իր իրաւազուրկ լինելը: Նա ապստամբեց՝ պետութիւնը կալուածատէրերի ձեռքով կառավարելու դէմ, և իր ուժերը զօրեղացնելու համար դաշինքի մէջ մտաւ միւս՝ քաղաքականապէս իրաւազուրկ դասակարգերի հետ. մանր բուրժուազիայի և պրօլետարիատի, որը շատ արագութեամբ էր զարգանում, բայց և որը դեռ չափազանց քիչ ինքնագիտակցութիւն ունէր, որպէսզի բուրժուազիան կարողանար վտանգ նախատեսել՝ նրան քաղաքական կռուի մէջ զցելուց: Այդ դաշինքի հետևանքը բուրժուազական - արմատական կուսակցութիւնը եղաւ, որը կալուածատիրական դասակարգի թշնամին հանդիսացաւ:

Ընտրողական իրաւունքը այն ժամանակվանից ի վեր քաղաքական պայքարի գլխաւոր առարկան դարձաւ: Այդ ընտրողական իրաւունքի առանձնայատուկ կողմերը հնարաւորութիւն տուեցին յաղթական արիստօկրատիային պարլամենտը բացառապէս իր շահերի ներկայացուցչութիւնը դարձնել: Եւ միմիայն ընտրողական իրաւունքի ձևափոխութիւնը կարող էր այդ ներկայացուցչական սիստեմը դարձնել բուրժուազիայի շահերի ներկայացուցչութիւն: Ամեն բան ընտրողական իրաւունքի շուրջն էր դառնում:

Բուրժուազիան յաղթող հանդիսացաւ ընտրողական իրաւունքի ձևափոխութեան համար մղված կռուի մէջ: Պրօլետարիատը նրա համար կրակից շագանակներ հանեց. նա իր ուսերի վրա էր տանում կռուի ամբողջ ծանրութիւնը, նա այդ բարենորոգութեան օգտին եղած շարժումը անընկճելի դարձրեց,—մասամբ ճիշտ այնպէս և միևնոյն միջոցներով, ինչպէս որ վերջին ժամանակներում արեցին մեր քաջ ընկերները Բելգիայում,—բայց նա ընտրողական իրաւունքներ չը ստացաւ:

1832 թ. բարենորոգութեան վերաբերեալ բիլը 88 մանր ընտրողական տեղեր զրկեց, կամ բոլորովին և կամ մասնակի կերպով միայն, իրանց առանձնայատուկ ներկայացուցչութիւնից (մի քանի տեղեր դեռ ևս միայն մի պատգամաւոր ուղարկում էին երկուսի փոխարէն), և 42 հատ նոր քաղաքային ընտրողական շրջաններ ստեղծեց: Գիւղական շրջաններում հիմա ընտրողական իրաւունք էին ձեռք բերում կալուածատէրերից բացի և ամենախոշոր կապալառուները, որոնք առնուազն 20 տարվան կապալի պայմանագիր ունէին և 50 ֆունտ ստերլինգից աւելի ռէնտա (կապալավարձ) էին վճարում: Իսկ մանր հողատէրերը ընդհակառակը զրկվեցին ընտրողական իրաւունքներից: Մինչ այդ ժամանակ այդ իրաւունքով օգտվում էին բոլոր այն հողատէրերը, որոնք 40 շիլլինգից (2 ֆ. ստ.) պակաս հողային ռէնտա չէին ստանում իրանց կալուածներից, իսկ հիմա այդ իրաւունքով կարող էին օգտվել միայն նրանք (շատ չնչին բացառութեամբ), որոնց ստացած հողային ռէնտան գոնէ 10 ֆ. ստերլինգ էր կազմում: Քաղաքներում ընտրողական իրաւունքներ ստանում էին նրանք, ով առանձին բնակարան ունէր, այսինքն՝ ով տուրքեր էր վճարում. բնակարանի, լուսամուտների և ազգամաների համար, ինչպէս և առնուազն 10 ֆ. ստ. բնակարանի վարձ:

Այդ ռէֆօրմի շնորհով ընտրողների թիւը 400,000-ից երկու անգամ աւելացաւ: Քուէարկելու ձևը միայն բացարձակ, ընտրվելու իրաւունք ունենալու ցենզը չէր փոխված*), պատգամաւորներին ռոճիկներ չէին նշանակված, ընտրութիւնների համար եղած ծախսերը պէտք է հոգային—մինչև այսօր էլ հոգացվում են—հենց իրանք թեկնածուները, որոնք մինչև իսկ ստիպված էին լինում կանխաւ գրաւական ներկայացնել հարկ եղած գումարը, երբեմն մօտ 1000 ֆ. ստերլինգ (մօտաւորապէս 10,000 րուբլի): Գիւղական շրջանները և քաղաքային ընտրողական մանր շրջանների մի մասը, որոնք յաճախ այն դէպս բոլորն էլ զրկված չէին ընտրողական իրաւունքից ոչ այդ ընտրողական օրէնքից առաջ և ոչ էլ յետոյ, խոշոր կալուածատէրերի սեփականութիւնն էին մնում: Բայց քաղաքային ընտրողական շրջանների մի մասը հիմա արդիւնագործական շահերի ներկայացուցիչներ էր ուղարկում պարլամենտ: Նոր ընտրողական իրաւունքը պարլամենտին էլ նոր բնաւորութիւն տուեց: Կալուածատիրական բուրժուազիայի դասակարգային տիրապետութեան միջոցից նա դարձաւ կռուի ասպարէզ, ուր կալուածատիրութիւնն ու արդիւնագործական կապիտալը ամենակատաղի կռիւ էին մղում:

Կալուածատէրերը դեռ ևս ամուր հասարակական դիրք էին գրաւում, ընտրողական իրաւունքը դեռ ևս նպաստաւոր էր նրանց համար: Արդիւնագործական բուրժուազիան երկար ժամանակ չէր կարողանում իր ամենագլխաւոր պահանջը՝ առևտրի ազատութիւն ստանալ:

Բայց նա չէր սահմանափակում իր կռիւը միմիայն պարլամենտական ասպարէզով: Իրաւ է ոչինչ այնչափ անհեթեթ չէ, քան այն, որ, կուրդ պրօլետարիատի աչքում պարլամենտարիզմը վարկաբեկ անելու նպատակով, հաւատացնում են, թէ իբր այն կուսակցութիւնը, որը իր ներկայացուցիչներն ունի պարլամենտում և մասնակցում է պարլամենտական պայքարի մէջ, այլևս բոլորովին հրաժարվում է քաղաքական կռուի միւս բոլոր ձևերից: Դրանից էլ աւելի սխալ բան չը կայ:

Ոչ մի տեղ պարլամենտական կուսակցութիւնները այնչափ յաճախ չեն դիմում պարլամենտական կեանքից դուրս մնացած մասսաների օգնութեանը, որչափ այդ անում են պարլամենտարիզմի հայրենիքում. ոչ մի տեղ այն աստիճան կատարելագործութեան հասցված չեն ժողովրդային մասսաների ընդարձակ շարժումների միջոցով պարլամենտի ու կառավարութեան վրա ճնշում գործելու եղանակները, ինչպէս Անգլիայում: (Հիմա էլ մենք նորից տեսնում ենք, թէ ինչպէս ծայրայեղ պահպանողական մինիստրները Ուլստերում դրդում են ժողովրդին ապստամբելու, որպէսզի Հօմ-րուլը տապալեն):

Նոյն բանն էր անում և հացհատիկների վրա եղած մաքսի հակառակորդների լիգան: Նա էլ էր մասսաներին դիմում, իսկ երբ իր շահերին ձեռնտու էր լինում, նա ապստամբութեան և մինչև իսկ ընդհանուր գործադուլի էր հրաւիրում նրանց:

Միւս կողմից հողատէրերն էլ իրանց կողմից էին աշխատում իրանց կողմը գրաւել բանւորներին: Գործարանատէրերը նրանց ասում էին, թէ էժան հաց կունենան, եթէ հացհատիկների վրա եղած մաքսը ոչնչացվի, իսկ հողատէրերը 10-ժամեայ աշխատանքի օր էին խոստանում նրանց:

Բայց թէ հողատէրերը և թէ գործարանատէրերը յամառութեամբ խուսափում էին այն բանից, ինչ որ կազմակերպված բանւորների ամենագլխաւոր պահանջն էր. ընդհանուր ընտրողական իրաւունքից:

Անգլիայի պետական մարդիկ շատ լաւ էին իմանում պարլամենտի իշխանութիւնը, որպէսզի իզուր տեղը թոյլ տային այնտեղ մտնելու կապիտալիստական հասարակութեան թշնամիներին: 1846 թ. կռիւը, վերջապէս, վճռողական դարձաւ, հացի մաքսերը վերացվեցին: Ազատ առևտուրի շրջանը սկսվեց, և, զանազան հանգամանքների զարմանալի զուգադիպութեամբ, դրա հետ միաժամանակ անտեսական կեանքը այնպիսի մի ուժով զարգացաւ, որպիսին աշխարհը դեռ ևս չէր տեսած: Անգլիան համաշխարհային շուկայի միահեծան տէրը դարձաւ:

Երկրի խոշոր արդիւնագործութիւնը առասպելական արագութեամբ էր զարգանում, նրա եկամուտները հրաշալի էին: Տնտեսական զարգացումը այնպիսի մեծ չափերի էր հասնում, որ համարեա թէ բոլոր դասակարգերն էլ օգտվում էին նրանից: Ծախսերը օտար պետութիւնների գրպանից էին դուրս գալիս: Հողատէրերը հաշտվեցին նոր կարգերի հետ: Հողային ռէնտան, ինչպէս որ նրանք վախենում էին, չիջաւ, այլ, ընդհակառակը, էլ աւելի բարձրացաւ: Դրա հետ միաժամանակ հողատէրերն էլ սկսեցին արդիւնագործական ձեռնարկութիւնների մէջ մասնակցել, իբրև ակցիօներական ընկերութիւնների անդամներ, և այդպիսով նրանք էլ շահագրգռվեցին արդիւնագործութեան ծաղկելու մէջ: Հիմա էլ նոյն բանը կրկնվեց, ինչ որ տեղի էր ունեցել անցեալ դարի երկրորդ կիսում: Ինչպէս այն ժամանակ վիգերի ու տօրիների միջև, այնպէս էլ այժմ լիբերալների ու պահպանողականների տարաձայնութիւնները կորցրեցին իրանց սկզբունքային բնաւորութիւնը: 1848 թւականից յետոյ եկած մօտաւոր տասնամեակներում մենք մի շատ նշանակալից երևոյթ ենք նկատում, մենք տեսնում ենք, թէ ինչպէս պահպանողական մինիստրութիւնները լիբերալների ծրագիրն են իրագործում և մինչև իսկ իրանց լիբերալիզմով կերպարանափոխում են նրանց: Եւ եթէ երկու կուսակցութիւններն էլ դեռ ևս չէին ձուլվում միմեանց հետ, դրա պատճառը դարձեալ գլխաւորապէս այն հանգամանքն էր, որ պետական մսուրգները չափազանց փոքր էին, որպէսզի կարողանային իրանց մէջ տեղաւորել այն ամենին, ով ձգտում էր նրանց պարլամենտի միջոցով: Պարլամենտական քաղաքականութիւնը դարձեալ բոլորովին կորցրեց իր սկզբունքային բնաւորութիւնը, պարլամենտական պայքարը նորից մի կատարեալ կօմեդիա դարձաւ, որ խաղում էին փառք ու պաշտօնի ձգտող մարդիկ ու իրանց արուեստով քաղաքագէտները: 1867 թւականի ընտրողական ռէֆօրմը սկզբում շատ քիչ փոխեց իրերի դրութիւնը: Տնտեսական կեանքի պահանջները ոչ միայն հողատէրերին հաշտեցրեց կապիտալիստական կարգերի հետ, այլ և նոյն իսկ բանւորներից մի մասին էլ: Այդ ապահովութիւնը հնարաւորութիւն տուեց բանւորների ամենահեռատեսն և աւելի ապահով խաւերին պրօֆեսիօնալ միութիւնների միջոցով բաւականին բարւոքել իրանց դրութիւնը:

Եւ որովհետև արդիւնագործութեան արդիւնքներն էլ այդ ժամանակ անհամեմատ մեծացել էին, ուստի կապիտալիստներն էլ հաշտվում էին բանւորների տարած յաղթութիւնների հետ: Մի տեսակ բանւորական արիստօկրատիա ստեղծվեց, որը հաւատում էր կապիտալի և աշխատանքի ներդաշնակութեան զօրութեան: Մի հանգամանք էր միայն այդ ներդաշնակութիւնը խանգարում. բանւորների քաղաքական իրաւազուրկ մնալը:

(Կը շարունակվի)

---

*) Դա փոխվեց միայն 1858 թւականին:

ԿԵԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Մեր քայլերի մէջ համաչափութիւն չը կար, գնում էինք աւելի շուտ պատահաբար՝ քան համոզված. երկչոտ էր ընկերս. նիհար, վարագուրած դէմքի վրա երևում էին և թախիծի նշաններ, բայց մի կատարեալ մարդ լինելու համար՝ նրան դեռ պակասում էր լրջութիւնը: Թաց էր մեր ճանապարհը ու ցեխ, հեռւում ոչինչ հետաքրքիր, որ կարողանար մեզ գրաւել. պատահական ճամբորդներ էինք այն մեծ նպատակի, որի անունը ոչինչն էր բնորոշում: Ընկերս ծիծաղկոտ էր ու թեթև. որևէ հիմք փնտռել նրա վարմունքի մէջ չէք կարող. նրա վերաբերմունքը առհասարակ դէպի կեանքը անմտածված էր ու պատահական: Ինձ նկարագրելու համար իմ գրիչը աւելի քան հպարտ է, չեմ ներկայացնի ինձ, որովհետև վարագոյրը շատ բան է ծածկում:

—Ի՞նչ ես մտածում,—հարցրեց ընկերս իր սովորական տոնով, որ աւելի քան ծաղրական էր:

—Երազում եմ:

—Ո՞ւմ մասին:

—Կեանքի մասին:

Նա ծիծաղեց այն պարզ ու հասարակ ծիծաղով, որով փայլում են յաճախ խելագարները:

—Գնում ենք, և այն աղտեղութեան մէջ, ուր թաղում ես քո միտքը, գտնվում է հոգեկան անզօրութիւն. մի մտածիր, իմ ընկեր, այլ ծիծաղիր. այս կեանքը ճանապարհների մի շարան է, որոնց վրա այսպէս թքում են՝ ու անցնում:

Ասաց, շուռ եկաւ, մէջքը քամուն տալով ափի մէջ լուցկին վառեց ծխախոտի համար, ու ցրտի դէմ մռմռաց:

Օտարոտի չէր այն թէզը, որին միշտ պաշտպան էր հանդիսանում ընկերս, իսկ վէճի առիթ տալու՝ նա շատ հեռու էր առողջութիւնից. ես լռեցի:

—Քո երազները ոչ մի նշանակութիւն չունեն, երբ նրանք պտտում են զգայական կեանքի շուրջը. ներիր, որ չեմ կարող կոկված ֆրազներով խօսել. դու եթէ երեխայ չես, ապա մարդ էլ չես.—ասաց, քմծիծաղ տուեց ու հազաց:

—Ի՞նչ ես դուրս տալիս, չեմ լսելու:

Բայց յանկարծ՝ աջ մայթից մի մարմին օրօրվեց, ցած ընկաւ ու մեր առաջ ցեխի մէջ թաւալվեց:

—Չը վախենաս, դա էլ մարդ է, բայց աւելի գործնական՝ քան քո երազները. իրական զգացումով ճանապարհորդելու համար անհրաժեշտ է անզգայանալը. անցնենք:

Մենք անցանք:

Կառքերը, որոնց աղմուկից յաճախ ըմբոստանում են ականջները, այս անգամ աւելի քան համեստ էին. թէք փողոցի վրա մի կին, իր դիրքով ոչ թէ գեղեցիկ էր, այլ հետաքրքրական, մենք դիտեցինք:

—Աչքերդ խօ չես կապել:

—Զարմացայ:

—Կեանքում չը սիրես:

—Ինչու:

—Որովհետև գեղեցկութիւն չը կայ:

—Յետոյ:

—Ատիր մարդուն, որովհետև կեանքը քայլերին է պատկանում:

—Ուրիշ:

—Գիտակից մարդը աւելի քան չարիք է. թող մեռնի միտքը...

Ասաց, թոյլ կերպով բռնեց ինձ ու կամաց շարունակեց.

—«Մի տեղ միայն դեռ՝
«Վառվում էր սէր,
«Որտեղ և ընկաւ իմ ժողովուրդը:
«Ես ասում եմ ձեզ...»:

—Ո՞ւմ:

—Մարդկանց, քեզ և ինձ:

Ես լուռ էի:

Ա. Զանեան

Բագու

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ ԳԱՒԱՌԻՑ

Յունվարի 15-ին

Ցանքերի և բուսականութեան ոռոգման հարցը այնքան չէ զբաղեցնում ժողովրդին մեր գաւառի մի քանի մասերում, որքան խմելու և բանեցնելու համար ջուր ունենալու խնդիրը: Շատ գիւղեր մեր գաւառի զանազան մասերում չունեն աղբիւրներ, որտեղից մաքուր ջուր վերցնէին թէ իրանց գործածութեան և թէ անասուններին խնամելու համար: Կան գիւղեր, որոնք արհեստական ջրամբարներ—«գեօլեր»—լճակներ են շինել, որտեղ հաւաքվելով թէ ձիւնի հալոցքները և թէ անձրևի ջրերը, բանեցնում են յատկապէս իրանց անասունները ջրելու համար: Իսկ կան նաև գիւղեր, որոնք իրանց խմելու ջուրը տակառներով կամ կժերով կրում են վերստերով հեռու ընկած ջրերից—աղբիւրներից կամ գետերից:

Իբրև աւելի մօտ ծանօթ գաւառի մի քանի գիւղերի հետ, մենք կը յիշատակենք միայն նրանց, որոնք կանոնաւոր աղբիւր չունենն գործածութեան համար, ուր մնաց ցանքերը ջրելու: Տարիներ առաջ ջրի սակաւութիւնից զգալի կերպով տառապում էին Ներքին-Ախտաքաղաք (վերին մասը), Սուխոյ-Ֆոնտանկա, Բաշքենդ, Նօվօ-Նիկօլաևկա (գաւառի սահմանագլխին) և այլ գիւղերը, որոնք ցանկութիւն են յայտնել սեփական աղբիւրներ ունենալ, բայց շատերին չէ աջողվել՝ դրամի և եռանդի բացակայութեան պատճառով... Դրանցից միայն Սուխոյ-Ֆոնտանը (ռուս) ջանք արեց իր աղբիւրն ունենալու և մասամբ Բաշքենդը (թուրք): Թող ընթերցողը չը զարմանայ, եթէ ասելու լինեմ, որ երբ Սուխոյ-Ֆոնտանում դեռ ջուր չը կար, և նրա բնակիչները տակառներով ջուր էին կրում 6 վերստ հեռու Հրազդանից, նրանք կամ ջրի տակառները զոմումն էին դնում և դուռը փակում և կամ տակառներին խուփ էին շինել և կողպէքը վրա դրել, որպէսզի ջուրը խմելու, թէյի և խմորի համար բանեցնէին, այլ ոչ թէ շռայլաբար փչացվէր ամեն մի պատահական բանի և գալոց-գնացողի համար, մանաւանդ որ գիւղը իբրև մի կայարան՝ ընկած է բանուկ ճանապարհի վրա: Այժմ արդէն մի քանի տարի է, ինչ այդ նոյն գիւղի ժողովուրդը, ծախսելով մօտ 3000 րուբլի, ունի իր գիւղի մօտին մի փոքրիկ աղբիւր, որի ջրից, բացի գիւղը օգտվելուց, դեռ ծախվում է անցորդ սայլապանների և փուրգոնների ձիաները ջրելու համար տարեկան մի քանի հարիւր րուբլու: Ուրեմն ասել է, որ մի 5—10 տարվայ ընթացքում գիւղի հասարակութիւնը իր արած ծախսերը յետ կը ստանայ ջրի եկամտից. միւս այնուհետև վաստակ կունենայ իր օգտին:

Այժմ աղբիւր ունենալու հարցը զբաղեցնում է Բաղսի գիւղի բնակիչներին, որոնք պայմանաւորվել են յայտնի ջրհան պ. Յ. Մանդալեանի հետ (Սուխոյ-Ֆոնտանի աղբիւր հանողը) 1500 րուբլի վարձատրութեամբ. նա սկսել է ջուր բերել 3 վերստ հեռու գտնված «Գափօյի աղբիւր» կոչված ջրամբարից, որտեղից ջուրը շատ հեշտութեամբ կը գայ զառիվայրով դէպի գիւղը, որի դիրքը աւելի շատ ցածր է այն տարածից, որտեղ գտնվում է ջրի ակը—ջրամբարը: Սակայն ջրհանվարպետը քանդելով ջրի ճանապարհը մինչև կէսը՝ գործը կիսատ է թողել, փող չը լինելու պատճառով: Գիւղի ժողովուրդը—30—35 տուն—միջոց չունենալով վճարելու կապալավարձը՝ գործը կանգ է առել: Իսկ գիւղի ժողովուրդը որոշել է ժողովարարութեամբ գոնէ փող «թօփ» անել՝ գործը շարունակելու համար: Ինչպէս լսեցի՝ դրանց հանգանակողներից մէկը անցեալներում գնացել-հասել էր նոյնիսկ Բագու, որտեղից գրեթէ դատարկ գրպանով է տուն եկել, իսկ մի ուրիշը ժողովում է մօտակայ գաւառներում: Բայց դժուար թէ հանգանակած կոպէկներով գործը շուտով գլուխ գայ, այլ հարկաւոր է կանխիկ գումար և այդ գումարը գիւղի աղքատիկ հասարակութիւնը յոյս ունի ձեռք բերել մի որևէ բարերար մարդուց, որը իր յիշատակի կամ թէ «հոգու փրկութեան» համար կը զիջի այդ գիւղի աղբիւրի կառուցման գործին: Եւ իրաւ, ով որ ուզում է միշտ ողորմի տանել, թող մի աղբիւր շինի Բաղսի պէս մի աղքատիկ գիւղի համար և մի «թաս» կախի մօտից, որտեղ վազելով մի բաժակ ջուր խմելու համար ծարաւից և տօթից պապակված անցորդները, հնձւորները և այլ աշխատաւորները՝ մի-մի բերան ողորմի կը տան շինողին և կանցնեն...

Հարկ եմ համարում յիշել և այն, որ ես ինքս իմ աչքով տեսել եմ, թէ ինչպէս նոյն այդ գիւղի կանանցից կամ տղամարդկանցից շատերը, ինչպէս նաև միւս հարևան գիւղերինը (Սօլակ, Ներքին-Ախտա և այլն) ձմրան ցրտերին հեռու Հրազդանից չալակով ջուր բերելիս, մի ձեռքով կժի կապն են բռնում, իսկ միւս ձեռքի հինգ մատը կուչ արած բերաններին են դնում՝ փչելու համար և այդպէս արթմրթալով, դողդողալով տուն են հասցրել կժով լի ջուրը:

Աւելացնենք և այն, որ առհասարակ բոլոր այն գիւղերի գործիչները, որոնք ջրի կարօտութիւն են քաշում, թող եռանդ և աշխատանք ցոյց տան իրանց համար ջուր բերելու այն ջրամբարներից, որոնք իբրև անգին գանձ թաղնված են գետնի տակ գիւղերից ոչ-շատ հեռու: Ո՞վ չը գիտէ, որ մեր լեռները, մեր սարերը, ժայռերի խոռոչները և քարափների ծմակները անչափ առատ են ջրերով: Կրկնում եմ, հարկաւոր է եռանդ, սէր, միութիւն և աշխատանք մեր գիւղերի գործիչներին, և ոչ թէ իրար միս ուտելով զբաղվել և թայֆայական ինտրիգներով առաջնորդվել...

Գ. Սիմոնեան

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

Յունվարի 27-ին

Որպէս պերճախօս ապացոյց մեր թշուառ քաղաքի մեռածութեան պէտք է նշանակել և այն փաստերից մէկը, որ Պետական Դումայի պատուիրակների ընտրութեան նախօրեակին (ընտրութիւնը 28-ին է) դեռ ոչ մի շարժում չի նկատվում: Կարծես ձևի համար, երեկվանից մի քանի անձնաւորութիւններ խանութները մօտ են գալիս և «կիսատ-բերնով» յորդորում բնակիչներին, որ ընտրութիւններին մասնակցեն: Մինչև այսօր, չը նայած արգելիչ հանգամանքների չգոյութեան, չի եղել ոչ մի նախապատրաստական ժողով, ագիտացիա՝ երբէք: Քաղաքում 1200 ընտրողներ կան, մօտաւորապէս 300 ձայն վրացիք ունեն, մնացածը հայերինն է. այս հաշւով հայերը հեշտութեամբ կարող են իրանց թեկնածուն ընտրել, բայց... Ահա այստեղ մի մեծ բայց կայ: Հայերի ձայները ճիւղաւորվել են. ստեղծվել են 5—6 խմբեր, որոնք իբրև թէ ագիտացիա են անում յօգուտ իրանց թեկնածուի: Այն կարծիքն է տիրում, որ վրացիները կը կարողանան անցկացնել իրանց ընտրելի պ. Զապարիձէին, ուսուցիչ քաղաքային դպրոցի, համոզմունքով սօցիալ-դեմօկրատ:

Ամբողջ Ախալցխայի գաւառի (185 գիւղ) և քաղաքի կողմից պէտք է ընտրվեն 6 պատուիրակ. սրանցից հազիւ մէկը, շատ-շատ երկուսը հայ կը լինեն:

Անցեալ շաբաթ քաղաքիս սիրողները ժողովարանի սրահում խաղացին «Պէպօ» յօգուտ Ղարաբաղի սովեալների. զուտ արդիւնքը հասնում է 150 րուբլու: Արժէ գովել այդ խմբի եռանդը, որը շուտով պիտի տայ և մի բենեֆիսային ներկայացում յօգուտ Պետրոսեանի ընտանիքի:

Հիւանդութիւնը քաղաքումս թուլացել է շնորհիւ ցրտերի մի քիչ սաստկանալուն. դպրոցները բաց են: Հայոց դպրոցը, կարծես, մի քիչ պղտորվել է, երևի վերջնականապէս պարզվելու համար: Սպասենք և տեսնենք...

Այս տարի ձմեռը շատ տարօրինակ է անցնում մեզանում. հակառակ նախորդ տարիների առատ ձիւների, այս տարի քիչ ձիւն տեսանք. շրջակայ սարերը հազիւ են ծածկվել սպիտակ շերտով։ Այս բանը շատ վնասակար կերպով կազդի, որովհետև մեր ամբողջ գաւառը մեծ առաւելութիւններ ունի անասնապահութեան համար գլխաւորապէս. իսկ սարերի առատ ձիւնը շատ է նպաստում դրան։

Շատ բան կայ գրելու տեղիս կանանց բարքերից, նրանց չար ու բարիից, սակայն դա մի քիչ ծանր խնդիր է, որովհետև առանց սուր դանակների չի կարելի մօտենալ դրան, իսկ սուր դանակը ժանտոտ վէրքի համար որքան առողջարար և բուժիչ է, նոյնքան էլ խկծեցնող ցաւ է պատճառում... Փորձենք նիւթը վէրքին մօտեցնել։

Իբրև հնին լաւ սիրահար, նոր, քաղաքակրթութեան դրոշմ կրող երևոյթներից խորթանող բնիկ ասիացի կինը, ախալցխացի կինը ոչ միայն ձեռք չի քաշել հին տարազից, որը որքան և գեղեցիկ ինքնուրոյնութեամբ, նոյնքան և շատ կենսական անյարմարութիւնների հետ կապված է, այլ և կեանքի անհրաժեշտ տարր է համարում ճակատի շար-ոսկին, թէկուզ դա հասարակ թիթեղից լինի շինված, ինչպէս մեծ մասինն է։ Ամեն հին բաներից ուշ ձեռք վերցնող է նա, ախալցխացի կինը, և հնութեան անզուգական յատկանիշն է բամբասանքը, որից նրանք այնքան շատ ունեն, որ տղամարդկանց էլ բաժին են հանում։

Բայց բնիկ տիպերի հետաքրքիր առանձնայատկութիւնները արժանի են աւելի մանրամասն ուսումնասիրութեան։ Եւ այդ յետոյ կաշխատենք տալ «Մշակի» ընթերցողներին։

—

28-ն յունվարի

Գիշերվայ եկած թանձր ձիւնը ծածկեց ամեն ինչ։ Եղանակը զգալի կերպով ցրտեց։ Ամբողջ գաւառի թուրք կալուածատէրերը քաղաք են եկել ընտրութեան մասնակցելու։ Այդ մարդիկ ոչինչ չեն հասկանում. կօմիկական դրութիւն է այդ խեղճերի համար. կարելի է մի ժամվայ ընթացքում տասն անգամ փոխել նրանց թեկնածուն։

Քաղաքի կողմից հաւանական թեկնածու է համարվում պ. Քոսեանը՝ Դաշնակցութեան կողմից զուցէ անցնի և ուսուցիչ Զաքարիեն՝ սօց.-դեմ. կողմից։

Գալուստ

ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐ

II

Նոր աշխարհում գրելացաւ ունեցող անհատներ սակաւ չեն պատահել հայ գաղթականների մէջ։ Խմբագրական դափնիներ որսալու տենչանքը դրդել է երբեմն առ երբեմն նոյն-իսկ բակական մարմնացեալ տիրացուներին խղճուկ, ողորմելի տպարաններ հիմնել իրանց մտքի անգին մարգարիտներով հայ գրական անդաստանը շքեղացնելու դիտաւորութեամբ։ Ամենաբեղմնաւորը, այսինքն՝ ամենաշատ թերթերի վերնագիրներ հնարողը Էկինեանը գտնվեց, որին աջողվեց իր գրական երկարամեայ անգոյն գործունէութեան ընթացքում հինգ տարբեր հրատարակութիւնների հայրը լինել։

Էկինեանի առաջ զաւակը ծնվեց Նիւ-Եօրքում 1886-ին, «Արեգակ» 1) անունով, որին յաջորդաբար հետևեցին «Սուրհանդակ», «Ազատութիւն», «Տիգրիս» և «Քաղաքացի». վերջինը Կալիֆօրնիայի Ֆրէզնօ քաղաքում, ուր շարունակվում է մինչև օրս, ամիսը մէկ թիւ լոյս ընծայելով, չափազանց հարուստ իր ծանուցումներով և յուսահատօրէն պարապ կողմակի նիւթերով 2)։

Այդ թերթերից «Տիգրիս»-ը հիմնված լինելով 1888 թ. ծախվեց 1899 թ. ապրիլի Վ. Շահէնեին և Գ. Ջիթչեանին, երկուսն էլ հնչակադարձեան, և ապա սկսեց հրատարակվել «Ձայն Հայրենեաց» անունով։ Սակայն Շահէնին արևմտեան նահանգները գնալով, իր բարձրագոյն կրթութիւնը առնելու նպատակով, ինչպէս և Ջիթչեանի անակնկալ մահը (սպանվեց 1902 թ. Օդեսայում տերորի ենթարկվելով) պատճառ եղաւ վերակազմեալների կողմից տպարանի գրաւման։ «Ձայնը» 1900-ից սկսեց հրատարակվել իբրև կուսակցութեան պաշտօնական օրգան և տեղափոխվեց Բօստօն, ուր և մնում է մինչև այժմ։

«Ձայն Հայրենեացի» երևումը իբրև վերակազմեալների օրգանի մի դարագլուխ կարելի է ընդունել հայ օրագրութեան պատմութեան մէջ։ Գրական բարքերի անկման մի շրջան եղաւ նա (Ամերիկայում, Եգիպտոսում), և հաստատապէս իրաւունք ունենք ասելու—հայ մամուլը երբէք այնքան գահավիժված չէ, երբէք հայ գրագէտի գրիչը այդչափ աղտոտված չէ, ինչպէս «Ձայնի» և նրա մի քանի արբանեակների էջերում 3)։

Այդ թերթի շնորհիւ սկսեց ծաղկել ու զարգանալ անբնականօրէն հանճարեղ մի զօլեան-հայհոյական գրականութիւն, այնպիսի անամօթ ցինիկ խմբագրականների ձևով, որոնք ամենաանբարոյական սրիկայական ժողովատեղիներում կամ թիարաններում նոյն իսկ ընդունելի չեն կարող լինել, իբրև ծայրայեղօրէն լիրբ ու սանձարձակ։ Անհնարին է չապշել անխիղճ հոգիների վրա, որոնք լրագրութիւնը, գրիչը ընդունակ են այդ աստիճան ստորացնելու, այդչափ տիղմի ու ապականութեան մէջ թաղելու։

Արժէ այստեղ փոքր ինչ կանգ առնել։

Որքան էլ ցանկալի չը թուար նորանոր յեղափոխական կուսակցութիւնների երևան գալը հրապարակի վրա՝ իբրև հայի խոցոտ մարմինը նոր վէրքերով ծածկող երևոյթի՝ այնուամենայնիւ պէտք է ենթադրել, որ թերևս վերակազմեալ հնչակեանութիւնը թարմ հոսանքներ մտցնելով թիւրքահայ ազատագրական շարժման մէջ՝ ընդունակ յայտնվէր իր պատուաւոր դիրքը գրաւելու, գլուխ ունենալով հասարակութեան ծանօթ գրական (միայն գրական) ույժեր։ Սակայն միանգամայն հակառակը պատահեց։

Կուսակցութեան ղեկավարները չըմբռնեցին ժամանակի լրջութիւնը. նրանք չը կարողացան խոնարհվել կեանքի պահանջների առաջ։ Նրանք անարժան յայտնվեցին այն դերերի համար, որ յանձն էին առած պատուով կատարելու։ Անհատական գծուծ հաշիւները, իրար ձեռքից դափնիներ յափշտակելու տղայամիտ ջանքերը 4) երևան բերին այն նախված բնազդները, որոնք շպարված էին միացած յեղափոխական առաքինութիւններով դիմակաւորված դէմքերի ներքև։

Վերակազմեալութիւնը հռչակվեց իբրև սկզբունքի, կարծիքի փոխանակութեան ամենակատաղի մի ուղղութիւն։ Նրա կողմից դաւանանքի կամ գործելակերպի պարկեշտութիւնը հասկացվում էր իբրև սխալական շահերի վնասակար մի երևոյթ և հետևապէս արժանի բացարձակ հալածանքի։ Իր ախոյեանի հետ չափվելու համար նա զինված էր միմիայն վայրենի, զազիր միջոցներով և նոյն իսկ իր երէկվայ առաջապահ զինուորներին տապալելու համար գործ դնում զրպարտութիւն, լկտի հայհոյանք, դաշոյն և ատրճանակ, որպէս իր միակ բարոյական զէնքեր։

Կուսակցական վակխանալիայի խելագար հարայ-հրոցի դէմ լսվող ամեն աննշան տրտունջ կամ բողոք պատժվում էր անողորմ կերպով։ «Ձայն»-ը մի փառաւոր արհեստանոց եղաւ այնպիսի յիշոցների, ածականների ու տմարդի զրպարտութիւնների, որոնք անհնարին է որևէ տեղ կրկնել, առանց պարկեշտութիւնից բոլորովին հրաժարվելու։ Սովորական բան էր գտնել նրա էջերում ամենատարօրինակ, աղտոտ հայհոյանքներ, որոնցից ամենաանմեղը թերևս այնպիսի բառեր էին, որպէս «պոռնկորդի», «աղախնի զաւակ», «շան վիժան», «սողունայետ», «ելուզակ» և այլն 5)։

Եւ ասել թէ՝ նման հայհոյանքների էին ենթարկվում յաճախ այնպիսի անձինք, որոնք գրական և քաղաքական տարբեր ուղղութիւնների արտայայտիչներ լինելով՝ ճանաչված են ընդհանուր հայ հասարակութեան կողմից իբրև որոշ դէմքեր։ Գաղափարի կռուի ասպարէզում վերակազմեալները, կամ աւելի ճիշտը՝ նրանց ղեկավարները անընդունակ եղան ազնիւ հակառակորդ լինելու իրանց իսկական կամ երևակայական թշնամիների վերաբերմամբ։

Վերակազմեալների «գաղափարական բարձր գրականութեան» մռայլ դէմքերի մէջ առաջնութեան պսակը վաստակող՝ Սուրէն Պարթևը եղաւ, ծագումով վանեցի, Պոլսում կրթութիւն առած, մի շնորհալի վայելուչ երիտասարդ — կիսաշխարհիկ պարիզուհիներին այնքան սիրելի մի «կօկօ»։ Պոլսեցի ինժեներ Մ. Մինդուտեանի խմբագրութեամբ հրատարակվող (սակաւակեաց մի թերթիկ—հասկանալի է) «Ժողովրդին համար» հանդէսին աշխատակցելուց յետոյ՝ յանկարծ մի գեղեցիկ օր՝ բարուք համարեց դաւաճանել այդ մասամբ հակայեղափոխական հրատարակութեան ամենածայրայեղ յեղափոխական դառնալու տենչով և նետվեց վերակազմեալների գիրկը։ Սակայն Զօպանեանի դափնիները իրան հանգիստ չէին տալիս։ Թէև բարեկամ և այն էլ շատ սրտակից՝ բայց և անճոռնի մանուկների պէս իրար հալածող, իրար դէմքերը ճանկռտող այդ երկու «փայլուն աստղերը» մինչև օրս գաղտնի ու բացարձակ պայքար են մղած իրար դէմ, մէկ օրը հաշտվելու և միւս օրը թշնամանալու համար։ Չը պէտք է զարմանալ, որ Զօպանեանը պատճառ եղաւ Պարթևի «Ձայն»-ի խմբագիրը լինելուն, թերևս դրդված էր սիրելի բարեկամին մի լաւութիւն անելու զգացմունքից, թերևս և նրան ֆրանսիական Բաբելոնից «ազատ անելու» ցանկութիւնից, ուր ինքը միայնակ կուզէր թագաւորել։ Յամենայն դէպս՝ մենք չենք կարող հաւատալ, որ «Անահիտ»-ի խմբագիրը Պարթևին Մ. Նահանգները ուղարկել տալով՝ կուզէր հայ ազատագրական շարժմանը մի կարևոր ու ազնիւ ույժ ընծայել 6)։

Սուրէն Պարթևը այնպիսի մի խաւար միջավայրում՝ որպէս ամերիկահայ գործաւոր դասակարգի մեծամասնութիւնն է՝ կարողացաւ հսկայական աջողութիւն ունենալ։ Նրա խմբագրականները միշտ յափշտակութեամբ կարդացվել են «Ձայն»-ի ոչխարամիտ բաժանորդների շրջաններում՝ մանաւանդ երբ նրանք ուղղված են եղել այս կամ այն անհատի դէմ։ Հայհոյանքների այդ մեծ մատակարարը աջողութեամբ թխում էր այնպիսի նախադասութիւններ, այնպիսի անճոռնի ածականներ ու խայտառակ յարձակումներ զանազան թշուառների դէմ՝ որ ափշեցնում էր մտքի ճկունութեամբ (վատ մտքով) նոյնիսկ իր կատաղի հակառակորդներին։ Նրա անունը հռչակված էր և սակաւ չէ ինքը խոստովանվել իր մտերիմներին, թէ պարծենում է, որ «աղուոր հայհոյել գիտէ» 7)։

---

1) Անմահ երգիծաբան Պարոնեանը, վրդովված որ հայկական արեգակը արևմուտքից է ծագել, հրաւիրեց Էկինեանին, որ վերջ տայ իր թերթին, մայր մտնի արեգակը, սպառնալով հակառակ դէպքում գալ Նիւ-Եօրկ և իրան խմբագրին ամերիկեան արուեստագիտութեան հռչակերտ համարվող Բրուկլինի կամուրջը կախել։

2) Ամերիկահայերը բացի վերոյիշեալ հրատարակութիւններից՝ ունեցել են «Հայք», ծանօթ դոքտոր Գաբրիէլեանի խմբագրութեամբ, «Արարատ», «Եփրատ», (երեքն էլ ընդհատված ներկայումս)։ «Հայրենիք»-ը՝ դաշնակցական, «Ձայն Հայրենեաց»-ը՝ վերակազմեալների օրգան, «Լոյս» ամսագիրը՝ գիտական բովանդակութեամբ, «Երիտասարդ Հայաստան» հին-հնչակեան, և «Կոչնակ»-ը՝ բողոքական-կրօնական մի շաբաթաթերթ, շարունակվում են և այժմ։ Ժամանակաւորապէս դադարեցված է համարվում «Արաքս» շաբաթաթերթը (puasie արմէրական) և «Արծիւ»-ը՝ վերջնականապէս։ Վերջինը, փողոցային յիշոցների անվայել, աղտոտ շտեմարան, հիմնված է վերակազմեալների օժանդակութեամբ՝ Սարաճեան «հակայեղափոխական» սրբազանին վրոտելու և անուանարկելու նպատակով։

3) Բօստօնի «Արծիւ», Եգիպտոսի «Ազատ բէմ», «Կըծակ», «Տանծ» հրատարակութիւններ։

4) Զօպանեանի և Սուրէն Պարթևի գժտութիւնը հետևանք էր այն ապուշ բանակռուի, թէ իրանցից որն է աւելի «մեծ գրագէտ...»։

5) «Ձայնի» խմբագրականներից մէկը Սարաճեան եպիսկոպոսի դէմ իր սանձարձակ ցինիզմով հսկայական պայքարի նախապատճառը եղաւ վերակազմեալ և հակավերակազմեալ բանակների մէջ, որը շարունակվում է մինչև այժմ։ Վերջինը ապաւինեց «Արաքս» շաբաթաթերթին, որի միջոցով վրդովված մի կրօնաւորի պատիւը անարգ կերպով վարկաբեկվելու փորձի դէմ նա արտայայտեց իր բողոքն ու զզուանքը անպատիւ շահատակութիւնների։ Խնդիրը իրապէս դառնում էր Սարաճեանի անձի և ոչ կոչման կամ դիրքի շուրջը։ Սակայն զզուելին հենց այդ էր։ Սարաճեան յանդգնութիւն ունենալով վերակազմեալների գործիքը չը դառնալու՝ դրանով իր վրա գրաւեց վերջինների զայրոյթը, որը արիւնոտ տերորի սպառնալիքով չը վարանեց նրան ներկայանալու։

6) Սուրէն Պարթևը, որպէս անուանում է ինքը Զօպանեանին, «բարձրագոյն իմաստակութեան» դէմ մղած է անընդհատ պայքար, տեղական անորականերով։ Նրա հրատարակած «Խարազան» բրօշիւրը, որը լոյս տեսաւ Պարիզում 1902-ին՝ ուղղված է վերջինի դէմ։ Դա մի սրիկայական աղտոտ պամֆլետ է, որով հեղինակը աւելի շատ ինքը բարոյապէս վնասեց, քան կարողացաւ վարկաբեկել իր ընկերոջ։ Զօպանեանի դէմ գրված թէ այդ բրօշիւրում և թէ բազմաթիւ յօդուածներով, «Ձայն»-ի մէջ նա կատարելապէս գծագրեց իրան ընթերցող հասարակութեան առաջ, որպէս անսկզբունք և մամուլը վատ, անօթարեր կոչերի ասպարէզ դարձնող մէկին։ Պարթևը չամաչեց Զօպանեանին անուանելու «ռուսահայ հարուստ երիտասարդներին կարմիր լաթերներով անհերն առաջնորդող» և պարզել այնպիսի պարագաներ, թէ՝ իր հօր մահվանից յետոյ, գերեզմանատեղից քաղաք դառնալիս՝ Զօպանեանը այնքան վշտացած էր, որ խնդրեց իր ընկերներին (Պարթևն էլ հետը) մխիթարվելու համար իրան սեանականոց տանել և թէ վեհանձն ընկերները ուզենալով իրանց հայրազուրկ բարեկամի վիշտը փարատել՝ կատարեցին նրա փափագը, «անոր դէմքի վրայ ժպիտ մը փայլեցնելու» համար։

7) Վերակազմեալները տգէտ ժողովրդի աչքին թող փչելու նպատակով ջանք չեն խնայում ապացուցելու Սուրէն Պարթևի մեծ գրագէտ լինելու հանգամանքը, եթէ ոչ առաջին փայլուն հանճարը ընդհանուր հայ գրականութեան մէջ։ Գաղափար տալու համար այդ մօդեռն ստիլիստի արտադրութիւնների մասին՝ առաջ ենք բերում իր առաջնորդողներից մէկի մի փոքրիկ հատուածը։ Ահա նա.

«Նոր տարւոյ սեմին վրայ՝ վայրկենի մը խորունկ ու խանդակաթ ինքնամփոփման մէջ՝ ազգային այժմէութիւններու ըմբռնումն ու հայրենասէր սրտացաւութեան և հայրենասէր փրկմաւորութեան նոյնաշրով մը՝ հայ կեանքին հորիզոններուն ընդգրկումը, մեղի չէր կրնար ներել մոռացումն իրանցն ու եղջանկաբար սրտակցութիւններու մէջ կեանքի խաւարութիւններու նոյնիսկ խոզէու դադարը...» («Ձայն Հայրենեաց» 1906, № 1)։

Եւ այսօրինակ ապուշ զառանցանքները բարձր ոճի արժէքով վաճառվում էին այն խղճուկ ամերիկներին, որոնք հազիւ կարող են թոթովանքով կարդալ հայերէնից ընդունած նամակները և որոնց ուղեղը յաճախ անընդունակ է լիովին հասկանալու այնպիսի մանկական պատմուածքներ, ինչպէս «փոքրիկ մուկիկն և չար փիսիկն» հեքիաթը։ Բայց չէ՞ որ բարձր է գնահատվում շատ անգամ այն, ինչ որ անհասանելի է հասկանալ։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Կրասնովոդսկ, յունվարի 18-ին

Կարդալով յարգելի լրագրիդ № 8-րդում Թաւրիզի թղթակցի նամակը «Մի նմուշ եկեղեցական վարչական գործերից» վերնագրի տակ, թոյլ եմ տալիս ինձ մի աւելորդ անգամ ևս ապացուցանել, որ, արդարև, մեր հոգևոր բարձր իշխանութիւնը իր անտակտ և անտարբեր գործողութիւնով ու վերաբերմունքով դէպի հասարակական բարոյական կեանքի ցաւերն ու խնդիրները ոչ թէ միայն խոր անդունդ է բաց անում եկեղեցու և հայ ժողովրդի մէջ, այլ և, կարծեմ, մեր բարոյական անկման գլխաւոր պատճառներից մէկն է կամենում հանդիսանալ, ինչպէս այդ ցոյց են տալիս զազրելի և տգեղ երևոյթները։

Նոյնանման մի դէպք ևս, ինչպիսին նկարագրում է Թաւրիզեցին, տեղի է ունենում նաև փոքրիկ Կրասնովոդսկում, որը իր ժամանակին թէ երկար խօսակցութեան նիւթ է դառնում հասարակական շրջաններում և թէ բաւական շփոթ ու խլրտում բարձրացրեց։ Անհաւատարմութեան մէջ է գտնում իր կնոջը երկու հասուն զաւակների տէր հայրը, որը քաղաքումս որոշ դիրք ունեցող և պատիւ վայելող մի անհատութիւն էր։ Չը կարողանալով տանել իրան հասած ընտանեկան այդ անպատւութիւնը, նա, սրանից մի տարի առաջ, բողոքով դիմում է հոգևոր բարձր ատեանին, ապահարզան պահանջելով։ Անցնում է երկար ժամանակ. տիրում է խորին և խորհրդաւոր լռութիւն. կրկնվում է նորից բողոքը և ապահարզանի պահանջը։ Նշանակվում է վերջապէս քննութիւն։ Իսկ հետևանքը, նոյն խորհրդաւոր լռութիւնը և անտարբեր վերաբերմունքը մինչև այսօր և ոչ մի դրական կամ բացասական պատասխան։ Մինչդեռ բողոքարկուն, սրանից երեք ամիս առաջ, ընկճված բարոյական վշտից, վախճանվում է հեռաւոր հիւսիսում անմխիթար և ցաւալի դրութեան մէջ։ Ահա խղճի և արդարութեան նոր օրէնքը և հասարակական բարոյական կեանքի զարգացման նոր եղանակ։

Թող հանգիստ լինի այսուհետև հոգևոր իշխանութիւնը, որովհետև իր անդորրութիւնը վրդովողը այլևս գոյութիւն չունի։

Արշաւիր քահանայ Վարդանեանց

—

Բատուա, 31/1/07-ին

Եւրոպական համարձակութեամբ՝ ուսումնական խնդրոյ մը համար ձեզ դիմելով՝ բնաւ չեմ տարակուսիր որ ոչ միայն ձեր ներողամտութեանը պիտի արժանանամ, այլ և ձեռնտուութեանը՝ քանի որ 1889-ի մայիս 17-ին, Թիֆլիսէն առ Մեծն Ալիշան հետևեալ նամակը ուղղած էք։

«Անցեալ ամառ ժողովեցի Արագած լեռան բուսականութիւնը, որի մի մասը դժբաղդաբար փչացաւ՝ խոնաւ եղանակին ժողոված լինելուն պատճառով։ Թիֆլիսում բոյսերը որոշեցի մասնագէտների օգնութիւնով և այժմ ուղարկում եմ ձեզ նրանց ցուցակը։ Արագածի բուսականութիւնը լիակատար ներկայացնելու նպատակով ցուցակի մէջ մտցրած են և մի քանի բոյսեր, որոնց մասին յիշում են Բուհզէ, Տրաուգֆետտեր և ուրիշ ուսումնականներ...»

Նոյն ձեր տեղեկութեանց հետևցուցած էք յիրաւի 206 տեսակ Արագածի բուսականութեան լատիներէն անունները։ Այժմ ես կը ցանկամ մեծապէս, ոչ միայն Արագածին՝ այլ նաև եթէ հնար է բոլոր Հայաստանի և հարևան երկիրներու բոյսերուն նմուշներէ աչքիս առջև ունենալ, վասն զի պէտք եմ հոս Բատուայի համալսարանի մէջ, 1908 թ. համար, իբր դափնեպսակման աւարտաճառ ներկայացնել «Հայաստանի Բուսակը» (իտալերէն լեզուով)։ Եւ որպէս զի սոյն աշխատութիւնս հայ անուան պատուաբեր լինի, անհրաժեշտ է որ անիկայ ամբողջական գործ մը ձեռնալով բուսաբան գիտնականաց համար նորութիւններ բովանդակէ։ Կը տեսնեմ որ չէ բաւեր Բուասիէէ, Զիխաչէվի, Ալբովի, Կօխի և այլ բազմաթիւ հեղինակներու գործերը աչքէ անցնել, այլ հարկ անհրաժեշտ է, որ ես ունենամ Հայաստանի բուսարան (Herbarium) մը։ Եւ ահա սոյն նպատակիս համար է, որ ձեր ազնուամեծար ազնուութեան կը դիմեմ խնդրելու թէ. կարելի չէ՞ արդեօք ձեր առ հ. Ալիշան ուղղած նամակի մէջ յիշված մասնագէտներու դիմել, որոնք եթէ ունին պատրաստ բոյսեր, ձեր միջնորդութեամբ, յղեն իմ հասցէիս, պայմանաւ որ ես վճարեմ ճանապարհածախսերը և երբ գործս լրընայ՝ նոյն զանոնք իրենց տէրերուն վերադարձնեմ, ինչպէս կընեն հոս եւրոպացիք իրարու։

Իմ ծրագրիս մէջ կը մտնեն Անդրկովկասի ամբողջ գաւառները, քաղաքները, գիւղերը և այլն, նաև Տաճկահայաստան, Պոնտոս, Ատրպատական և Կիլիկիա։

Փետրվար ամսոյն «Բազմավէպ»ի կողքին վրայ հրատարակեցի բաց նամակ մը սոյն խնդրոյս նկատմամբ։ Այժմ նոյնը առանձին տպագրելով կը յղեմ ծանօթ անձերուս։ Հոս ներփակած եմ նմոյշ մը սոյն թերթիկէն։ Ո՞րքան երախտագէտ պիտի մնամ ձեզ, ազնուամեծար խմբագրապետ, եթէ բարեհաճիք պատշաճ գտնել նոյնը տպագրելու նաև ազգօգուտ «Մշակ»ի մէջ, վասն զի վստահ եմ որ շատ ուսումնասէր և ձեռնհաս ուսանողներ պիտի չզլանան ինձ ձեռնտու գտնուելու սոյն աշխատասիրութեանս մէջ։

Կանխելով բիւր շնորհակալեաց անկեղծ հաւաստիքը՝

Հ. Ներսէս Տիրացուեան

Ստորագրեալս Բնական Գիտութեանց համալսարանական ուսանող ըլլալով՝ յանձնեցին ինձ իբր դափնեպսակման աւարտաճառ (Thèse de lauréat) պատրաստել մեր «բնաշխարհի բուսակը»։—La Flora Armena.—

Սոյն աշխատասիրութեանս մէջ լաւ յաջողելու համար, անհրաժեշտ է որ մեր երկրի բուսարան (herbier) մը աչքիս առջև ունենամ։ Եւ որովհետև անհնարին է ինձ՝ զանազան գաւառներու բոյսերը անձամբ հաւաքել, մտածութիւնն ունեցայ մեր երկրի գլխաւոր քաղաքներու և գիւղերու ծանօթ ձեռնհաս անձերու դիմել։

Ձեզ ևս դիմելու համարձակութեանս մասին ներողամտութիւնն հայցելով՝ կը խնդրեմ ջերմագին որ՝ եթէ ոչ անձամբ՝ գոնէ ձեր ծանօթներու կամ նոյն իսկ դպրոցական տղոց միջնորդութեամբ՝ աշխատութիւն յանձն առնուք նպաստելու ինձ, ժողովելով և բուսարան ձևացնելով այն ամեն տարբեր տեսակ բոյսերէն որոնք ձեր քաղաքի և գիւղերու շրջակայքը կը գտնուին։

Կը կանխեմ ըսելու թէ ոչ միայն պատրաստ եմ ձեր ընելիք մանր ծախսերն հատուցանել, այլ և Ձեր անունը յիշել աշխատասիրութեանս մէջ, և երբ տպուի օրինակ մը ձեզ նուիրելու փոյթ ունենալ։ Դարձեալ՝ վարձք խոստանալ այն ամեն լաւ պատրաստուած բոյսերու համար՝ որ Բատուա քաղաքի Համալսարանին Տնկաբանական պարտէզի բուսաբանը ուզէ իրեն սեփականել։

Ներուի ինձ համառօտիւ ծանուցանել թէ՝ ինչպէս պէտք է բուսարան՝ (որ է՝ չորցուած և թղթի մէջ պահած բոյսերու հաւաքածոյ) կազմել։

Բոյսեր հաւաքելու համար շրջագայութեան ատեն՝ պէտք է միասին ունենալ՝ զամբիւղ, մկրատ և բոյսը արմատով հանելու գործիք, նաև աման մը՝ որ յարմար ըլլայ բոյսերը մէջը լեցնելու։ Ամեն մէկ տեսակ բոյսէ երկ-երկու կամ երեք-երեք օրինակներ ժողովելու փափագելի է։

Շրջագայութենէն դառնալով պէտք է իւրաքանչիւր տեսակ բոյս առանձին լրագրի կտորի մը (կամ լաւ ևս ծծուն թղթի) վրայ տարածելով վրանին ծածկել 6-էն 10 անգամ ծալլուած ուրիշ լրագիրներ (կամ ծծուն թղթեր)։ Յետ բոյսերու և թղթերու ամբողջութիւնը վրայէ վրայ դիզելու՝ պէտք է տախտակով (կամ ստուարաթղթով) մը ծածկել և անոնց խոնաւութիւնը թղթերու կլանելն։ Երկրորդ օրը խոնաւցած թղթերը պէտք է փոխել և բոյսերը ուրիշ արևու մէջ չորցուցած սոր վրան ալ խոշոր քար մը կամ ծանրոցներ զետեղել, որով բոյսերը լաւ մը կը ճնշուին և թղթերու վրայ փոխադրել, և դնել նորէն ծանրոցներու ճնշման տակ։ Երրորդ օրը վերստին փոփոխել թղթերը, և այսպէս շարունակել 5-էն մինչև 10 օր։ Սոյն ձևով բոյսերը լաւ մը կը չորնան և չեն մգլոտիր։ Եթէ աշխատութիւննիդ լաւ չյաջողի, պէտք չէ հոգ ընել ես սիրով կընդունիմ անկատար պատրաստուած բոյսերն ալ։

Փափաքելի է որ խոտեղէն ծաղիկ տուող յայտասեր (phanérogame) բոյսերը կատարեալ օրինակներ ըլլան. այսինքն թէ՝ ունենան արմատ, ցօղուն, ծաղիկներ, և եթէ հնար է՝ պտուղներ կամ սերմեր որոնք թղթէ քսակներու մէջ լեցնելով՝ բոյսը կրող թղթին կը կցեն։ Փայտեղէն տունկերու, երկայն ցօղունով բոյսերու և ծառերու գալով՝ բաւ է հաւաքել անոնցմէ ճիւղեր կամ ճղիկներ՝ որոնք ունենան տերևներ և ծաղիկներ։ Պարտէզներու մէջ ծաղկող թէ ընդեղէն և թէ զարդի ծառայող բոյսերու ամեն տեսակներէն (օր օրինակ, վարդերու, կակաչներու, լոբիաներու, ցորեններու, և այլն) պէտք է նմոյշներ հաւաքել։

Բուսարանի համար պատրաստուած բոյսը լաւ կըլլայ՝ էջ մը ճերմակ թղթի վրայ (որոյ մեծութիւնն պէտք չէ անցնի 0,35×0,50 հարիւրամետր) դերձանով կամ կպչուն թղթի շերտերով, կամ գնդասեղներով հաստատել։ Եթէ ազատ ալ ձգուի, վնաս չի բերեր։

Փափաքելի է նաև որ ամեն բոյս կրող թղթին վրայ նշանակէք անոր անունը որ և է լեզուով որ գիտէք. անոր ինչպիսի գետնի արդիւնք ըլլալը, լեռնային թէ դաշտային, անտառային թէ բլրային, և այլն. և գրեք նաև թէ որ ամսուան և օրուան մէջ ժողված էք։

Առանց պահանջելու ձեզմէ, աւելորդ չեմ համարիր պարզելու թէ, հոս Եւրոպայի մէջ, իւրաքանչիւր բոյս կրող թղթին կը միացընեն պիտակ մը (թղթիկ)՝ որու վրայ հետևեալ շարք մը տեղեկութիւններէն գէթ գլխաւորները գրուած կըլլան։

Ա.—Բոյսի անունը, որ և է որքան լեզուով և գաւառաբարբառով որ հաւաքողը գիտէ։

Բ.—Բոյսի գտնված տեղւոյն յատուկ անունը, կամ յիշել թէ այն բոյսը, որ քաղաքի կամ գեղի, որ գետի կամ լերան մերձակայքը կը գտնուի։

Գ.—Ընդհանրապէս այդ բոյսը ինչպիսի տեղեր կը բուսնի։ (Զօր օրինակ, դաշտային է թէ անտառային. ճախճային է թէ ջրային, աւերակներու մէջ թէ քարաժայռերու կամ պատերու վրայ կը բուսնի։ Եթէ բլրային է կամ լեռնային, այն ատեն կը նշանակեն նաև թէ մերձաւորապէս ո՛րքան բարձրութեան վրայ կը բուսնի և ո՛ր դիրքի վրայ, այսինքն Հիւսիս թէ Հարաւ. Արևելք թէ Արևմուտք)։

Դ.—Ի՞նչպիսի հող կը սիրէ՝ կրային թէ զաւարգային, աւազուտ թէ կաւային։ Հաղուագիւտ է թէ սովորական։

Ե.—Ի՞նչ բանի կը գործածուի. (Դեղ կըլլա, մարդիկ կամ կենդանիք կուտեն, արհեստի մէջ կը գործածուի՞)։

Զ.—Ծաղկումը ո՞րքան ժամանակ կը տևէ։ (Զօր օրինակ, Մարտի սկիզբէն՝ Ապրիլի կէսը, կամ Մայիսէն՝ Սեպտեմբեր)։

Է.—Բոյսը գտած օրուան թուականը, և գտնողին անունը և մականունը։

Գարնան սկիզբը անտառներու և ամառն ու աշնան դաշտերու և հովիտներու մէջ միասին կը ծլին, կը ծաղկին և կը պտղին, ծաղիկ տուող և կամ բնաւ ծաղիկ չտուող բազմաթիւ բոյսեր մեծ ու պզտիկ առաւել կամ նուազ գեղեցիկ տերևներով կամ ծաղիկներով։ Թերևս [illegible] և փոքրիկները իմ ուսումնասիրութեանս համար օգտակարագոյն լինին։ Ուստի կը խնդրեմ՝ որ և է տեսակ (espèce) և զանազանակ (variété) բոյսեր գտնէք՝ անխտիր բուսաքաղէք և զրկէք իմ հասցէիս յանձնարարեալ (recommandé, Թղթատարով, սեփական) ծրարով մը։

Մեծայոյս եմ որ առաջին ծրար մը այս 1907-ի գարնան յղելով, ամառը և աշնան ալ կը զրկէք ուրիշներ։ Ի վերջ գրութեանս կը խնդրեմ ի սրտէ՝ որ բարեհաճիք երկտողիւ մը, ներկայ թուղթս ընդունելնիդ և ձեր տրամադրութիւնը ինձ ծանուցանել՝ որուն համար կանխելով իմ ջերմաջերմ շնորհակալիքս, մնամ։

Հ. Ներսէս Տիրացուեան

Հասցէս է՝

R. P. Nersés Dirazouyan
Studente in Scienze Naturali Nell'Orto
Botanico
Dalla R. Universitá di
(Italia) PADOVA

—

Օլթի, յունվարի 27-ին

Անցեալ տարվայ 276 համարում «Մշակի» մէջ լոյս տեսած Օլթիից գրած թղթակցութեան մէջ յօդուածագիրը վարկաբեկել է տեղս հայ կաթօլիկ քահանային, և թէ ժողովրդին, որպէս թէ նրանք թատրոնը համարում են «քէլլէ-գիզութիւն», և չեն յաճախում։

Անցեալ 1905 թվի համարեա սկզբից, տեղս կազմված էր սիրողների խումբ մը, վստահելի անձնաւորութիւններից, որոնց ժամանակ մեր մէջ կասկածելի մտածմունք չէ պատահած, որ մի քանի ժամանակ ներկայացումներ կատարվեց յօգուտ տեղիս ծխական դպրոցին, և բոլոր հայ լուսաւորչական և հայ կաթօլիկ համայնքներս ուրախութեամբ յաճախում էր։

Վերջին ժամանակներս տեղիս ծխական դպրոցի ուսուցիչ պ. Ա. Տէր-Ներսէսեանցը, իրան յարմար մի քանի կասկածելի երիտասարդների հետ միասին, կազմեց «սիրողներ», և մի անգամ ներկայացումից արդէն նկատվեց այդ խմբի անբարոյականութիւնը, և մենք ստիպված խնդրեցինք մեր քահանային, որ արգելէ այդ խմբին մասնակցող օրիորդներին. նոյնպէս արգելեցին ևս՝ իրանց օրիորդներին տեղիս հայ լուսաւորչականներից մի երկուսը։

Չանցած մի երկու շաբաթ, այսինքն 1907 թ. յունվարի 6-ի երեկոյեան ապացուցվեց այդ սիրողների անարժան վարմունքը, և թէ մանաւանդ պարահանդէսից, որի ժամանակ հանդիսատես մի քանի անձնաւորութիւնները, տեսնելով կատարվող անբարոյական եղելութիւնները, լարված ատրճանակները ձեռքերին պահանջում են դպրոցի հոգաբարձութիւնից, որ իսկոյն և եթ դադարեցնէ այդ պարահանդէսը (այսինքն Քեօր-օղլուի խաղը), եթէ ոչ վերջ կը տան այդ պարոնների ոտքերը։ Հոգաբարձութիւնը, ի նկատի առնելով վատ հետևանքը, իսկոյն դադարեցնում է պարահանդէսը, և այդպիսով վերջ է դրվում, ցրվում են։

Հետևեալ օրը ևս նոյն պարոնները, ժողովքի են կանչում այդ սիրող կոչվածներին և նրանց թակելուց վերջը հեռացնում են, և այժմ իրար դէմ վիճաբանում։ Նայենք հետևանքը ինչ է լինելու։

Պօղոս Բօյաճեան, Գրիգոր Կալփակճեան

—

Մեղրի

Իրողութիւնը պարզելու համար խնդրում ենք տեղ տալ մեր այս երկտողին «Մշակի» մօտակայ համարներից մէկում։

Պ. Մաթէոս Շահեանցը «Մշակ» լրագրի 234-ը համարում լոյս տեսած «Մի էջ սխրագործութիւններից» յօդուածի վեցերորդ կէտում մի զրպարտութիւն է արել, որը մեզ անչափ զարմացրեց։ Իրաւ է, որ գոյութիւն ունի այդպիսի կանանց մի խումբ, բայց թէ դրանք իրանց հաւաքած գումարով ցանկացել են տնայնական ուսում դնել, և Դաշնակցութիւնը ճնշում է գործ դրել չիրականացնելու այդ ցանկութիւնը և վերջ տալ խմբի գոյութեանը միանգամայն սխալ է, այլ ընդհակառակը խրախուսանքի և աջակցութեան ենք արժանացել Դաշնակցութեան տեղական մարմնի կողմից. չենք կարողանում հասկանալ, թէ պ. յօդուածագիրը ինչու նեղութիւն չի կրել նախքան գրելը ստուգել իրողութիւնը, այլ ղեկավարվել է միայն իր անձնական գծուծ հաշիւներով և կրքով։ Այդ առիթով մենք յայտնում ենք մեր բուռն զայրոյթը *)։

Ի դիմաց կանանց խմբի՝

Սօնա Թարմանեանց, Սաթենիկ Սէֆեանց

---

*) Ծ. Խ.—Նամակս ուղարկված է եղել մեզ վաղուց, բայց մեզանից անկախ պատճառներով ուշացել է։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Յունվարի 30-ին, երեկոյեան ժամը 4-ի մօտերը Կովկասի, Փոխարքայի հարս կոմսուհի Վարվարա-Դաւիդովնա Վօրօնցովա-Դաշկովան այցելելով առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանին առաջնորդարան՝ յանձնել է նրան 3500 րուբլի այն գումարից, որպիսին գոյացել է կոմսուհու նախագահութեամբ Զանգեզուրի սովյալուց ազգաբնակութեան համար տրված պարահանդէսից։ Ընդհանուր արդիւնքից (մօտ 8 հազար րուբլի) յիշեալ գումարը միմիայն նոյն գաւառի հայ սովյալուների բաժինն է։ Կոմսուհին, հանդիպելով սիրալիր ընդունելութեան և հիւրասիրվելով սուրճով, մեկնել է պալատ։

—

Ինչպէս լսել է «Южный Телеграфъ» լրագիրը, Նոր-Նախիջևանի հայոց թեմական դպրոցի և տեղական այլ միջնակարգ դպրոցների դասատու Ի. Ս. Տալդովը հրաւիրված է Մոսկվա ստանձնել Մոսկվայի Լազարեանի ճեմարանի տեսչի պաշտօնը։

—

Յունվարի 30-ին, իր խանութից տուն վերադարձող վաճառական Ստ. Նարգուլեանի վրա, Մողնու եկեղեցու մօտ, յարձակվում են 6 զինված անյայտ անձինք և կողոպտում են նրանից 600 րուբլի փող, 100 րուբլի արժողութեան ոսկէ ժամացոյցը և ատրճանակը, որից յետոյ անյայտանում են։

—

Թիֆլիսի զօրքերին հրամայված է զինուորների համար կապալառուներից ստացվող միսը ընդունել միայն այն ժամանակ, երբ նրանց վրա կը լինի քաղաքային վարչութեան կնիքը։

—

Թիֆլիսի ռէալական դպրոցում պարապմունքները ժամանակաւորապէս դադարեցրած են։

—

Ստացանք գիմնազիայի 4-դ դաս. աշակերտի օգտին մի ումն-ից 1 րուբլի։

—

Ստացանք Յուսիկ եպիսկոպոսի «Անապատականներ և Վանականութիւն» գիրքը, արտատպված «Արարատ» ամսագրից, 156 երես, գինն է 40 կոպէկ։

—

Յունվարի 30-ին վիրաւորված ցենզուրական կոմիտեի նախագահ Վ. Ի. Կոլօկօլը կազդուրվում է։ Նրա կեանքին վտանգ չէ սպառնում։ Նրա կեանքի դէմ կատարված մահափորձի պատճառը, ինչպէս հաղորդում են «Т. Л.» լրագրին, եղել է անձնական վրէժը։

—

Երեկվանից Թիֆլիսում, Աւճալեան փողոց № 29 բացվել են վրաց ժողովրդական և եկեղեցական երգեցողութեան դասընթացքներ։ Ցանկացողները կարող են գրվել «վրացիների մէջ գրագիտութիւն տարածող ընկ». քարտուղարի մօտ։ Դասընթացքները ղեկավարող և ուսուցանողն է Ա. Կավաձէն։

—

Ի նկատի ունենալով, որ շուտով Կովկաս է ժամանելու ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը, Անդրկովկասի երկաթուղային կառավարիչ Նէյգիրտուէրը պահանջել է երկաթուղային վարչութիւնների և բաժանմունքների կառավարիչներից իրան ներկայացնել գործերի ժամանակակից դրութեան վերաբերեալ տեղեկութիւններ, որպէսզի մինիստրին ներկայացնելու համար հաշուետուութեան մի զեկուցում պատրաստէ։ Այդ տեղեկութիւնները պէտք է ներկայացվեն մինչև փետրվարի 5-ը, («Т. Л.»)

—

Թիֆլիսի ժամանակաւ. գեն.-նահանգապետի դիւանատունը վերջին կարգադրութեամբ Թիֆլիսի հացթուխների խնդիրքը ալիւրի գինը բարձրացնելու պատճառով հացի գինը թանգացնելու վերաբերմամբ ուղարկել է Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարին քննելու և հարկաւոր կարգադրութիւնը անելու համար։

—

Նահանգական բանտում բանտարկված Սաւֆան Սեմակօվին, Մովսէս Մարգարեանին, Րօմանօվ Կանկայէվին և Նիկօլայ Միրաքեանին, իբրև հասարակութեան վնասակար անձնաւորութիւնների, արգելված է ապրել Թիֆլիսում և Թիֆլիսի նահանգում զինուորական դրութեան ամբողջ ժամանակամիջոցում, և նրանք աքսորվում են էտապով իրանց տեղերը։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան ծառայողների ժողովը, քննելով ռոճիկներն աւելացնելու հարցը, եկել է հետևեալ եզրակացութեան. ի նկատի առնելով այն հանգամանքը, որ այդ հարցը բարդ է և անհրաժեշտ է նրան վճռել ծառայողների ընդհանուր ժողովում, յանձնել այդ հարցի մշակելը առանձին մասնաժողովի, որը կը ներկայացնէ իր եզրափակութիւնը այդ գործի վերաբերմամբ ընդհանուր ժողովին, վերջնականապէս վճռելու համար։

—

Զուգդիդի նախկին գաւառապետ պ. Գեգամօվին կենսաթոշակ է նշանակված 1600 րուբլի տարեկան։ («Зак.»)

—

Ինչպէս լսել է «Рус. Жизнь» լրագիրը, անգլիացի մի խումբ կապիտալիստներ Ուրալում մի քանի ձեռնարկութիւններ են ձեռք բերել 12 միլիարդ գումարի։ («Б.»)

—

«Բագւում հրատարակվող «Баку» լրագրի խմբագիր պ. Կարա-Մուրզան դատաստանական պատասխանատուութեան է ենթարկված մայրաքաղաքի լրագիրներից երկու յօդուած արտատպելու համար («Баку» № 13). տեղական դատախազը գտել է, որ այդ յօդուածները արտատպելով պ. Կարա Մուրզան խախտել է մամուլի վերաբերեալ ժամանակաւոր կանոնները։ («Б.»)

—

Թիֆլիսի խուլիգանները առաջվայ նման շարունակում են ուղարկել սպառնական նամակներ և փող պահանջել։ Այդպիսի մի նամակ 400 րուբլի պահանջով մօտ օրերս ստացել է, ինչպէս լսել է «Իսարի» լրագիրը, վրաց հասարակական յայտնի գործիչ և գրող Անտոն Պուրցելաձէն։ Սպառնական նամակներ ստացել են նաև իշխ. Իվ. Մխ. Մաչաբելին։ Տալով այս տեղեկութիւնը «Закавказье» լրագիրը, իր կողմից աւելացնում է, որ ամբողջ հասարակութիւնը պէտք է եռանդով հետևէ այդ խուլիգաններին, որպէսզի որքան կարելի է շուտ վերջ դրվի նրանց խայտառակութիւններին և ոտնձգութիւններին։

—

Բագւում վերջին երեք օրում եկել է մեծ քանակութեամբ ձիւն. այդ հանգամանքը առիթ է տուել փողոցային ուրախութիւններ սիրողներին քաղաքի բոլոր մասերում ձիւնագնդերով ռմբակոծել բոլոր թէ կառքով և թէ ոտքով անցորդներին։ Գլխաւոր փողոցներում ուղղակի անհնար է եղել անցնել մանաւանդ կանանց համար։ «Հանաքչիները» հասել են այն աստիճանին, որ սկսել են քարերը ձիւնապատել և այնպէս նետել անցորդների վրա, որով տեղի են ունեցել շատ դժբախտ դէպքեր։ Այսպէս, ինչպէս պատմել են, Կամենիստի և Կրաժէկնի փողոցներում այնքան են ձիւնով «թակել», որ հարկ է եղել նրան ուշքի բերել և հիւանդանոց ուղարկել։ Մի քանիսի գլուխները արիւնլիկ են արել։ Թատրոնում, ցերեկվայ ներկայացումից յետոյ, իսկական դիրք են բռնել և չեն թողել ոչ մի կնոջ դուրս գալու, և միայն ոստիկանութեան միջամտութիւնն է սահման դրել այդ խայտառակութեան։ Վերջ ի վերջոյ ոստիկանութիւնը գործ է դրել համարեա իր բոլոր ույժերը վերջ դնելու այդ ռմբակոծութեան և շատերին ձերբակալել է, սակայն վրա հասած մթութիւնը միայն վերջնականապէս վերջ է տուել անգործների ժամանցին։ Դժբախտաբար այդ կռւին, անկուլտուրական հանաքին մասնակցել են տեղական կրթական հաստատութիւնների սաները։

—

Թիֆլիս է եկել Բագւի նահանգապետ պ. Ալիշէվսկին։

—

Բագւում, յունվարի 24-ին, առաւօտեան ժամը 8-ին, ոստիկանութիւնը անակնկալ խուզարկութիւն է կատարում նաւթարդիւնաբերողների խորհրդի բալախանեան գրադարան-ընթերցարանում։ Ամենամանրազնին խուզարկութիւն է կատարվում գրադարանապետի բնակարանում և գրադարան-ընթերցարանում, սակայն ոչ մի կասկածելի բան չէ գտնվում, թէև ոստիկանութիւնը գնալու ժամանակ իր հետ տանում է «Донская Рѣчь», «Рѣчь», «Молотъ» և այլ հրատարակութիւնների գրքերը։ Խուզարկութիւնը տևել է 4 ժամ շարունակ։

—

Յունվարի 27-ին, գիշերվայ ժամը 3-ին, Բագւում, իր բնակարանում, ինքնասպանութիւն է գործել Կուբանեան կօզակային գնդի զինուոր Գրիգորի Ստեպանօվիչ Լիսկօվիցկին։ Ինքնասպանութեան պատճառը առայժմ անյայտ է։

—

Յունվարի 27-ին, Բագւում, կայարանի մօտ գտնվող Թաղամասում, Սալեանսկի գնդի վառօդի պահեստների վրա հսկող զինուորը գիշերվայ ժամը 12-ին նկատում է, որ երկու անյայտ անձինք դիմում են պահեստների կողմը։ «Ո՞վ է գալիս» աղաղակին, պահապան զինուորի ասելով, լսվում են յաջորդաբար հինգ կրակոց դէպի նա. զինուորը պատասխանում է կրակելով։ Անմիջապէս վրա են հասնում պահապան զինուորները և կրակ են բանում մթութեան մէջ անյայտացող անծանօթների ուղղութեամբ։ Կրակում են ընդամենը 40 անգամ։ Ոստիկանութեան տեղեկութիւններին նայած, անյայտները դուրս են եկել երկաթուղային գծերից։

—

Ինչպէս լսել է «Русск. Ж.» լրագիրը, ներկայ կաբինէտի կազմի մէջ ոչ մի փոփոխութիւն չէ սպասվում։ Բոլոր մինիստրներն էլ և նրանց օգնականները, ինչպէս դրականապէս պնդում են, կը մնան իրանց պաշտօններում, գլուխ ունենալով Ստոլիպինին, ոչ միայն մինչև Պետական Դուման, այլ և նրա գումարումից յետոյ։

—

«Слово» ի ասելով, մինիստրների խորհուրդը քննելու է Պետական Դումայի առաջին նիստին ներկայացվելիք այն օրինագիծը, որ կազմել է ներքին գործերի մինիստրը նահանգապետական իշխանութիւնը ընդլայնելու վերաբերմամբ, որի ուժով նահանգապետներին իրաւունք է տրվելու՝ բացատրութիւններ պահանջել բոլոր վարչութիւնների պաշտօնական անձերից, բացառութեամբ պետական կօնտրօլի և դատարանի, ինչպէս և վերաքննութիւն կատարել այդ հաստատութիւններում։ Նահանգապետներին իրաւունք է տրվելու նաև իրանց համաձայնութիւնը կամ մերժումը յայտնել այն պաշտօնեաներին պաշտօն տալու նկատմամբ, որոնց այդ վարչութեան համար նշանակում էին տեղական հիմնարկութիւնները։ Նոր օրինագծով մտադրվում է դարձեալ նահանգապետներին ազատել ներկայումս նրանց վրա դրված պարտականութիւնների մի քանիսից։ («Б.»)

—

Գ. Վ. Պլէխանովը, որ ներկայումս գտնվում է Իտալիայում, վտանգաւոր կերպով հիւանդ է։ («Тов.»)

—

«Сегодня» լրագրի ասելով, Պետերբուրգի տեխնօլօգիական ինստիտուտի ներկայացուցիչների խորհուրդը ուղարկել է իր վարչութեան բոլոր անդամներին յունվարի 20-ին կայացած ընդհանուր ուսանողական ժողովի բանաձևը պահանջելով նրանցից անմիջապէս հրաժարական տալ, որի մասին միաժամանակ տեղեկացնում է և ի գիտութիւն ինստիտուտի դիրեկտորին խնդրելով վերջինիս բարդութիւնների տեղիք չը տալու համար արգելել վարչութեան բոլոր անդամներին յաճախելու ինստիտուտ։

—

Պետերբուրգի դատաստանական պալատը անհետևանք է թողել Պետական Դումայի նախկին անդամ Օնիպկօյի, իբրև «Трудовая Россія» լրագրի դէմ սկսած գործը, որովհետև Օնիպկօյի գրական յանցանքը շատ ցածր է այն վճռից, որին դատապարտված է նա զինւորական դատարանի կողմից 1907 թւի սեպտեմբերի 17-ին։ («Р. В.»)

—

Օդեսայում, յունվարի 23-ին, պատերազմադաշտային դատարանը աքսորի է դատապարտել Օդեսայի բանուոր պատգամաւորի նախագահ ուսանող Շավտիային (վրացի), որ բանտարկված է մի ամբողջ տարի։ Մնացած մեղադրվողները, որ ազատ էին թողնվել երաշխաւորութեամբ և կամ գրաւականով, բոլորն էլ անյայտացել են։ («З.»)

—

Յունվարի 25-ին Պետերբուրգում Օխտայի մասում խուզարկու ոստիկանութիւնը ամբողջ գիշերը խուզարկութեան է ենթարկել մի շարք անձանց բնակարանները, որոնց վրա կասկած կար, որ նրանք պատկանում են յեղափոխական ռազմիկկազմակերպութիւններին։ Այդ խուզարկութեան արդիւնքը եղել է այն, որ կասկածվողներից կալանաւորված են 10 հոգի։ Գտնված են մի քանի զէնքեր, պայթուցիկ իրեր։ Բաւականաչափ անլեգալ գրականութիւն է գրաւված։ Խուզարկութիւնը սկսվել է կէս գիշերից և վերջացել է առաւօտեան ժամը 4-ին։ («Новое Время»)

—

Ինչպէս յայտնի է, Մօսկվայի քաղաքապետ գեներալ Րէյնբօտը որոշել էր Մօսկվայից արտաքսել յայտնի իրաւաբան Մուրավիէվին, սրա՝ ժողովրդական ազատութեան կուսակցութեան նախընտրական ագիտացիական ժողովներին մասնակցելուն համար։ Ինչպէս պարզվել է Մօսկվայի գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ կատարված քննութիւնից, պ. Մուրավիէվի մասնակցութիւնը ագիտացիական ժողովներին արտայայտվել է միայն նրանով, որ մի քանի օր առաջ, իբրև Պրէչիստէնսկի քաղաքամասի ընտրողներից մէկը, նա ներկայ է եղել ընտրողների տեղական րայօնական ժողովին, որ կայացվել է քաղաքապետի թոյլտւութեամբ, ընտրվել է ժողովի նախագահ և ադմինիստրացիայի ներկայացուցչի ներկայութեամբ ամբողջ նիստը աջողութեամբ տարել է սկզբից մինչև վերջ առանց որևէ միջնադէպերի։ Այս փաստացի ապացոյցների հիման վրա գեներալ-նահանգապետը հնարաւոր չէ գտել հաստատել քաղաքապետի որոշումը և փոխել է նրան բոլոր որոշումներով հանդերձ։

—

«Р. В.»-ին գրում են Ելցից. «Քաղաքի փողոցներում ազդարարված էր, որ յունվարի 3-ին կայանալու է հոկտ. 17-ի դաշնակցութեան նախընտրական ժողովը և հրաւիրվում են ոչ միայն դաշնակցութեան անդամները, այլ և նրանք, որ կը ցանկանան յարվել այդ դաշնակցութեան։ Երեկոյեան, հակառակ «դաշնակցութեանը յարվել ցանկացողների սպասածին», ժողովը սկսվեց նախագահի հետևեալ խօսքերով. «Խնդրում եմ հեռանալ նրանց, որոնք դաշնակցութեան անդամ չեն»։ Ա. Ա. Ստախօվիչը, որ գտնվում էր հասարակութեան մէջ, խօսք խնդրեց։ Սակայն նրան ասացին, որ, ի նկատի առնելով այն հանգամանքը որ նա բացարձակապէս պատկանում է ժողովրդական ազատութեան կուսակցութեան, պէտք է անյապաղ հեռանայ ժողովից, հակառակ դէպքում կը կանչեն ոստիկանութեան։ Ստախօվիչը դարձեալ խօսք խնդրեց, բայց պրիստաւը բռնեց նրա օձիքից և սկսեց քաշքշել նրան, աղաղակելով ոստիկանին «Դուրս տար»։ Ինչպէս յայտնի է, Ա. Ա. Ստախօվիչը մինչև վերջին ժամանակներս Ելցում ազնուականների պարագլուխն էր և իր անկեղծութեամբ և եռանդուն գործունէութեամբ գաւառի լուսաւորութեան հողի վրա յայտնի է Ելցի սահմաններից դուրս էլ, բայց և այնպէս դաշնակիցները նրա հետ հանաք չարին։ Ինչպէս ասում են, Ա. Ա. Ստախօվիչը պրիստաւին դատարան է հրաւիրել»։

—

Կիէվում, բժիշկ Նէյշտուբէի մասնաւոր հիւանդանոցում ձրի ընդունում են թոքախտաւոր գեղջկուհի Սինէլնիկօվային։ Մնալով հինգ օր հիւանդանոցում, Սինէլնիկօվան իմացել է, որ հիւանդանոցը պատկանում է հրէայի։ Սարսափելի կերպով յուզվելով, հիւանդը կամեցել է անմիջապէս փախչել «ուղղափառ քրիստոնեաների մօտ»։ Որովհետև նրա դրութիւնը շատ լուրջ է եղել, ամեն կերպ հիւանդին սկսել են համոզել, սակայն նա ինքնամոռացութեան դրութեան մէջ կամեցել է փախչել մերկ։ Հիւանդանոցի վարչութիւնը կանչում է ոստիկանի, որին և յանձնում է Սինէլնիկօվային։ Ոստիկանը հիւանդին տանում է նախ հիւանդանոց, իսկ յետոյ Պօկրօվսկի մենաստանին կից գտնվող հիւանդանոցը, սակայն այստեղ հիւանդին բոլորովին չեն ընդունում և նրան թողնում են անուշադիր։ Այդ օրից Սինէլնիկօվան անհետ կորչում է, և նրա այրը նրան անօգուտ փնտռում է։ («К. Гол.»)

—

Պետերբուրգի գրաշարների դաշնակցութիւնը գրաշարական տարիֆի հարցը վերջնականապէս լուծել է արդէն։ Կազմված մի շարք զուտ մասնագիտական յանձնաժողովները քննել ու մշակել են նրանց աշխատանքների վարձագինը, մնում է միայն նրանց ընդհանուր պահանջները ամբողջացնել։ Հարցը մի փոքր բարդանում է նրանով, որ մայրաքաղաքում և գաւառներում գրաշարների վարձագները իրարից խիստ կերպով տարբերվում են. Պետերբուրգում, օրինակ, վճարում են գրաշարին 22—27 կոպէկ հազար տառի համար, գաւառական մի քանի քաղաքներում վճարում են 13—14 կոպէկ։ Առաջիկայում գումարվելիք համառուսական տպարանական բանուորների կօնֆերենցիան լիակատար հնարաւորութիւն կունենայ այդ հարցը լուծելու, մանաւանդ որ կօնֆերենցիա գումարելու աշխատանքները մասնաժողովի կողմից դրված են ամենալայն հիմունքների վրա։ («Телеграфъ»)

—

Մօտ ժամանակներս Վիբօրգում ստացվել է Պետերբուրգի քաղաքապետ գեներալ-մայոր Դրաչևսկուց հրաման տեղական ոստիկանութեան աջակցութեամբ խուզարկել Վիբօրգի բոլոր տպարանները, իմանալու համար թէ որտեղ են տպագրում սօցիալիստ-յեղափոխականների օրգան «Трудъ» լրագիրը։ Ֆինլանդական ոստիկանութիւնը հրաժարվել է կատարել այդ հրամանը։ Խուզարկու ոստիկանութեան կօմիսսար Անտօնօվը հրաժարվել է խուզարկութիւն կատարել, որովհետև շրջաբերականի մէջ մատնացոյց չեն արված այն շարժառիթները, որոնք օրինական իրաւունք են տալիս խուզարկութիւն կատարելու։ («Товарищъ»)

—

«Телеграфъ» լրագրի ասելով, ներքին գործերի մինիստրը շրջաբերական է ուղարկել բոլոր զինւորական նահանգապետներին, նահանգապետներին, քաղաքապետներին և Վարշաւայի օբեր-ոստիկանապետին, որով մատնացոյց է արվում, թէ ինչ հիմունքներով և ինչ գումարներից պէտք է վարձատրել ոստիկանական այն ծառայողներին, որոնք վիրավել են անկարգութիւնները ճնշելու ժամանակ։ Այդ շրջաբերականում ի միջի այլոց ասված է, որ 1907 թւականի համար յիշեալ նպատակով ամբողջ կայսրութեան համար յատկացված է մի միլիօն րուբլի։ Մի միլիօն րուբլի նպաստ յատկացվում է ոստիկանութեանը այն ժամանակ, երբ ամբողջ երկիրը գտնվում է սովի ճիրաններում և նրա փրկութեան համար ասում են, որ միջոցներ չը կան։ Երբ մի ամբողջ քաղաք ենթարկվում է տուգանքի քաղաքի մէջ կատարված մի ոստիկանի սպանութեան համար, աւելորդ չէ՞, միթէ, մի այդպիսի նպաստ էլ յատկացնել։

—

Բանտային գլխաւոր վարչութիւնը ուղարկել է բոլոր նահանգապետներին, համապատասխան կարգադրութիւններ անելու համար, մի հրահանգագիր, որ վերաբերում է բանտարկվածներին բանտերում պահելու կարգին։ Հրահանգագրում ի միջի այլոց ասված է, որ ծխել կարելի է թոյլատրել սոսկ այն բանտարկեալներին, որոնք իրանց լաւ վարքով և ջանասիրութեամբ այդ շնորհին արժանի ճանաչվեն, եթէ միայն այդ վտանգաւոր չէ կարող լինել հրդեհի նկատմամբ և չէ ճնշում չը ծխող բանտարկեալներին։

—

Պարզվել է, որ Շլիսսէլբուրգեան բերդը առաջվայ նման մնալու է իբրև աքսորավայր այն քաղաքական յանցաւորների համար, որոնք կամ իրանք անձամբ մօտիկ մասնակցութիւն են ցոյց տուել այս կամ այն խոշոր քաղաքական յանցանքի մէջ, կամ նպաստել են յանցանքի գաղտնապահութեան։ Այդ կաթէգօրիայի մէջ են մտնում տէրրօրիստները, էքսպրօպրիատօրները և այլն։ Անկասկած է, որ վերջիններիս վերաբերութեամբ Շլիսելբուրգում կը գործադրվի նոյն րէժիմը, որը գործում էր Կարպօվիչի, Գէրշունու և Լ. Ա. Վօլկէնշտէյնի օրերում։ («Баку»)

—

Պահնորդական ոստիկանութիւնը ներկայումս ոտքի վրա է։ Մի խուզարկութեան ժամանակ նա գտել ի պալատական կօզակների 45 հատ չերքէսկաներ։ Քաղաքամասի ոստիկաններին պատուիրված է անյապաղ ամեն միջոցներ ձեռք առնել գտնելու այն անձանց, որոնք ընդունել են այն չերքեսկաների պատուէրները՝ ինչպէս և պատուէրը կատարված տեղը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

31 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունվարի։ Վերջին ժամանակներս ռուսաց և արտասահմանեան մամուլում լուրեր երևացին, որ իբր կառավարութիւնը մտադիր է անբերրիութիւնից վնասված ազգաբնակութեան համար ցորեն գնել արտասահմանում։ Այս առիթով ներքին գործերի մինիստրութեան զէմստվային բաժինը բացատրում է, որ բոլոր նման լուրերը սխալ են։ Ո՛չ մատակարարական, ոչ սերմացուի ցորեն արտասահմանում չէ գնվել և մտադրութիւն էլ չի եղել գնել։ Անբերրիութիւնից վնասված բոլոր նահանգները արդէն ապահովված են ցորենով մինչև մայիս ամիսը։ Միւս կողմից սերմացուն 2/3-ով աւելի է պահանջվող ընդհանուր քանակից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յունվ.։ Կօզակային զօրքերի գլխաւոր վարչութեան կառավարչի օգնական գեներալ-լէյտենանտ Գարֆը նշանակված է այդ վարչութեան կառավարիչ։

ՆԻՒ-ԵՈՐՔ, 31 յունվարի։ Բլօկայլէնդի և Րօդայլէնդի միջև «Լարկմօնդ» ճանապարհորդական նաւը ընդհարվեց թեքակայմ նաւի հետ։ Նաւում գտնվող 150 ճանապարհորդներից ազատվեցին միայն 19 հոգի։

ՏՕԿԻՕ, 31 յունվ.։ Պրինց Ֆուշիմին մեկնեց Անգլիա։ Պատգամաւորների պալատը իր գոյութեան ընթացքում առաջինը առանց որևէ փոփոխութեան ընդունեց նախահաշիւը։ Ներկայումս օպպօզիցիան բոլորովին անզօր է։

ԼՕՆԴՕՆ, 31 յունվ.։ Ստորին պալատում, պատասխան-ուղերձի մասին սկսվում են տաք վիճաբանութիւններ, որոնց ժամանակ Բալֆուրը կասկածում է, որ հազիւ թէ աջողվի առաջիկայ նստաշրջանին նախագծվող օրինագծերը անցկացնել, թէկուզ միայն ստորին պալատում, և մատնանշում է, որ անմիտ բան է ենթադրել, թէ վերին պալատի վերակազմութեամբ հնարաւոր կը լինի մէջտեղից բարձել երկու պալատների միջև տեղի ունեցող տարաձայնութիւնները։

Առարկելով նրան Կէմպբէլ Բաններմանը ասում է.

«Գիտակցում եմ, որ լօրդերի պալատի հարցը շատ լուրջ հարց է։ Կառավարութիւնը ձեռնարկել է քննել այդ հարցը ո՛չ ինքնասիրութիւնից կամ բարկութիւնից դրդված։ Կառավարութիւնը կը յարուցէ ոչ թէ լօրդերի պալատը փոփոխելու հարցը, այլ երկու պալատների յարաբերութիւնները կանօնաւորելու հարցը։ Այդ հարցը ծագեց շնորհիւ այն բանի, որ վերջին նստաշրջանում լօրդերը մերժեցին երկու կարևոր օրինագծեր, որոնց իրականացումը պահանջում էր ժողովուրդը։ Ցամենայն դէպս այդ հարցը պէտք է այժմ լուծվի (աղմկալից ծափահարութիւններ)։ Ներկայ դրութիւնը ես անպատուաբեր և վտանգաւոր եմ գտնում. պէտք է ստեղծել պալատների յարաբերութիւնների այնպիսի կարգ ու կանօն, որի ժամանակ հնարաւոր կը լինի իրականացնել ժողովրդի ցանկութիւնները»։ Ապա Կէմպբէլ Բաններմանը շարունակում է. «Կարելի՛ է, արդեօք, ժխտել, թէ իռլանդական ժողովուրդը իրաւունք ունի վճռել իր տեղական գործերը, որոնք բնաւ չեն շօշափում Անգլիայի շահերը, որոնք չեն խախտում պարլամենտի գերագոյն իշխանութիւնը և ուստի չեն թուլացնում միացեալ կայսրութեան երեք մասերի կապը։ Կայսրութեան ոյժը չի թուլանայ երբեք այն բանից, որ Իռլանդիային տրվի այն, ինչ որ վայելում է ինքնավարութիւն ստացած իւրաքանչիւր գաղութ»։

Լօրդերի պալատում Լէնսդօունը ասել է, որ լօրդերը պատրաստ են հակառակելու կառավարութեանը վերին պալատի վերակազմութեան հարցում ինչպէս պալատի մէջ, այնպէս և նրանից դուրս։ Լէնսդօունը հարց է տալիս՝ մտադիր է, արդեօք, կառավարութիւնը Հնդկաստանում ձեռնարկել այնպիսի վերանորոգութիւնների, որոնք կապ ունենն կառավարութեան հէնց հիմունքներին։ Լէնսդօունը գոհունակութիւն է յայտնում Աւղանիստանի էմիրի այցելութեան առիթով, որը ցոյց է տալիս, որ աջողվեց ցրել այն նախատածմունքը և կասկածոտութիւնը, որոնցով էմիրը երկար ժամանակ վերաբերվում էր դէպի հնդկական կառավարութիւնը։

Պատասխանելով Լէնսդօունին, Բրիզօնը ասում է, որ անհրաժեշտ է մի քանի քայլ անել՝ բաւարարութիւն տալու համարեա հանուր Հնդկաստանի ցանկութիւններին և ձեռնարկել քաղաքական վերակազմութիւնների։ Կոմս Մինդօն կազմել է մի յատուկ մասնաժողով այդ հարցը քննելու համար։ Մասնաժողովի եզրակացութիւնները հեռագրով կը հաղորդվեն փետրվարի վերջերին։ Բրիզօնի ասելով, էմիրի այցելութիւնը կամրապնդէ անգլօ-աւղանական յարաբերութիւնները։

1 փետրվարի

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 31 յունվարի։ Րուզվէլտը առաջարկել է սենատի և պարլամենտի գաղթականութեան հարցով զբաղվող մասնաժողովների նախագահներին, ինչպէս և կօնգրէսի հանրապետական կուսակցութեան ղեկավարներին նոր օրէնքի մէջ մտցնել մի յօդուած, որով արգելվի ճապօնական կուլիներին մտնել Միացեալ-Նահանգները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յունվարի։ Բանւորական հարցով զբաղվող մասնաժողովի նիստը, արդիւնաբերութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ, կայանալու է փետրվարի 14-ին։

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան ձեռքի տակ ունեցած տեղեկութիւնների համաձայն երկաթուղիների կայարաններում ներկայումս կանգնած են 83159 վագօններ, որոնցից 57000-ը հացով են բեռնաւորված։

ԼՕՆԴՕՆ, 31 յունվարի։ Առաջին մինիստրը ի պատիւ Մարտէնսի տալիս է նախաճաշ, որին հրաւիրված են շատ աչքի ընկնող գործիչներ։ Ուրբաթ օրը ճաշ կը տայ արդարադատութեան մինիստրը։

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 31 յունվարի։ Ոստիկանութիւնը գտել է շատ կարևոր փաստաթղթեր, որոնք գողացված են առևտրի մինիստրութիւնից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յունվարի։ Գտնելով որ սենատի ընդհանուր ժողովների և ատեանների գործերի շուտափոյթ կատարման համար ոչ միայն պահանջ չը կայ սենատօրների թիւը աւելացնելու, որոնք ներկայումս ներկայ են լինում վերոյիշեալ հաստատութիւններում, այլ ընդհակառակն, պէտք կայ այդ թիւը փոքր չափով կրճատել, ֆինանսների մինիստրը մինիստրների խորհրդին է ներկայացրել մի առաջարկագիր՝ բարձրագոյն հաճութիւն խնդրելու կրճատել ապագայում սենատի ատեաններում և ընդհանուր ժողովներում ներկայ եղող սենատօրների վրա գործադրվելիք ծախքերը նորմալ գումարով այն հաշուով միայն, որ ներկայումս նրանց վրա գործադրվող ծախքերը աստիճանաբար կրճատվեն մինչև այդ նորմալ նորման՝ նոր սենատօրներ, նոյն իսկ պաշտօններից հեռացածների փոխարէն չը նշանակել այլևս։ 1901 թ. սենատօրների վրա ծախսվել է 580,353 րուբլի, իսկ 1907 թ. արդարադատութեան մինիստրի ելմտի մէջ այդ թիւը հասցրած է 758,439 րուբլու։ Միայն 1906 թւի ընթացքում սենատօրների թիւը աւելացել է 14-ով, իսկ մինչև 1907 թւի յունվար ամիսը հասել է 94-ի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յունվ.։ Պաշտօնական։ Յունվարի 30-ին մինիստրների խորհուրդը, բացի ելմտային բնաւորութիւն կրող գործերից, քննել և ընդունել է ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան առաջարկը՝ Պետական Դումայի քննութեանը ներկայացնել կայսրութեան մէջ ընդհանուր պարտադիր ուսում մտցնելու օրինագիծը։ Այդ օրինագծի նպատակն է. երկու սեռի բոլոր երեխաներին հնարաւորութիւն տալ՝ դպրոցական հասակին առնելուն պէս (8—11 տարեկան) անցնել ուսման ընդհանուր ընթացքը կանոնաւոր կազմակերպված դպրոցում։ Այդօրինակ դպրոց համարվում է մի այնպիսի դպրոց, որ կունենայ երեք բաժանմունք, դպրոցական համապատասխան շինութիւն և ուսման պարագաներ և կունենայ նաև կրօնուսոյց և դասաւանդելու իրաւունք ունեցող ուսուցիչ։ Հարկաւոր թւով դպրոցներ մշտապէս բանալու հոգսը դրվում է տեղական ինքնավար մարմինների վրա, որոնց տրվում է այդ դպրոցների ինչպէս կազմակերպութեան, այնպէս և կառավարութեան հսկողութեան տակ նրանց կառավարելու իրաւունք։ Դպրոցների անհրաժեշտ քանակը հիմնվում է դպրոցական ցանցի և նրա իրականացման պլանի հիմունքներով. տեղական ինքնավարական մարմինները մշակում են յիշեալ պլանը՝ հիմնելու մի դպրոց 50 երեխաներով և որ իւրաքանչիւր դպրոց միւսից գտնվի երեք վերստ հեռաւորութեան վրա։ Դպրոցական ընդհանուր ցանցի մէջ են մտնում համակարգաւորված և պատշաճ կարգով կազմակերպված բոլոր դպրոցները, լինեն դրանք կառավարութեան ձեռքով հաստատված, թէ հասարակական հիմնարկութիւնների, դասակարգային և այլ կազմակերպութիւնների և կամ մասնաւոր անձանց բացված, միևնոյն է։

Աստիճանաբար ընդհանուր պարտադիր ուսում մտցնելու գործին օժանդակելու համար ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ելմտի մէջ մտցվում է ամեն տարի մի յատուկ գումար, որով մինիստրութիւնը օգնութեան է հասնում դպրոցներ հիմնողներին գլխաւորապէս մանկավարժական մարմնի ռոճիկները տալով, բայց ոչ 390 րուբլուց աւելի իւրաքանչիւր 50 երեխաների ուսուցչին, որով ուսուցչի նորմալ վարձատրութիւնը մտադրվում է որոշել 360, իսկ կրօնուսոյցի համար—60 ր.։ Յիշեալ օժանդակութիւնը տրվում է միայն այն դպրոցների համար, որոնք մտնում են մինիստրութեան հաստատած դպրոցական ցանցի մէջ։ Ուղղափառ դաւանութեան վարչութեան նոյնպէս տրվում է վերոյիշեալ քանակով նպաստ միայն կրկին այն պայմանով, որ դպրոցական ընդհանուր ցուցակի մէջ մտցրած եկեղեցական դպրոցները կանոնաւոր կազմակերպված լինեն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յունվ.։ Կողոպտված են պետական գինու պահեստները՝ Զուտին գիւղում, ուր սպանվել են 3 հոգի. Սուդմակի գաւառում, որտեղից գողացված է 120 րուբլի. Իվանօվօ-վօզնէսէնսկում, ուր սպանվել է պահակ. Կօստրօմա կօզակային գիւղում գողացված է երկու հարիւր րուբլի. Լօպուշին գիւղում 16 զինված անձինք կորզել են 400 րուբլի. Պրօմիէկում գողացված է 325 րուբլի. Բախմուտում մահացու վիրաւորվել է գրամատարը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԷՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ե. Տուրենկօվ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—6½—7½ ժ.։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացեայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առաւ. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36
60—100

Մի ինտելիգենտ **հայուհի** ցանկանում է մտնել հայ ընտանիք—երեխաների մօտ ոչ փոքր հինգ տարեկանից, համաձայն է գնալ և ուրիշ քաղաք. ցանկացողները թէ նամակով և թէ անձամբ կարող են դիմել Վօզնէսէնսկայա փողոց, տուն № 18. վերին յարկ, առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 7-ը։
(Ե. Հ. Կ.) 4—5

ԲԺԻՇԿ
Տ. Ա. Խախանեան
ՄԱՍՆԱԳԷՏ՝
սեռային և վեներական
հիւանդութիւնների
Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ.
երեկոյեան 5—7 ժ.
Սօլօլակ, Սերգիևսկայա 15, Փրիդօնովի տանը։
տ. (չ. ու. գ.) 35—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ս. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա, Սեմեօնովսկի փողոց № 16։
(ու. կ. չ.) 18—20

Կ. ԱՖՐԻԿԵԱՆԻ
տնկարանը առաջարկում է պատուաստած մրգերի
ծառեր և թուփեր
ԷԺԱՆԱՑՐԱԾ ԳՆԵՐՈՎ
Ծառացուցակներն ուղարկվում են ձրի։
Հասցէն՝ Гори, Тиф. губ.
(ե. ու.) 4—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8.
(ե. հ. չ.) 19—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը {առաւ. 10—12 ժ.
Տէլէֆօն № 1087
Սօլօլակ, Լերմօնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 99—150

ՄԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ
քաղաքային ուսումնարանը աւարտած, ցանկանում է մի որևէ
ՊԱՇՏՕՆ
Հասցէն՝ Баку, 2-е почтовое отдѣленіе, чиновнику Ванціянцу
(ու. կ. չ.) 4—6

Յունվարի 31-ին լոյս տեսաւ
ՀԱՍԿԵՐ
№ 1. Յունվար 1907 թիւ.
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
1. ԵՐԿՈՒ ԽՌՈՎԿԱՆՆԵՐ,—Սաղաթեանի
2. ՄԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ,—Ղազարոս Աղայեանի
3. ԿԱՔԱՒԻ ԵՐԳԸ,—Յովհ. Թումանեանի.
4. ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՋՈՐՈՒ ՎՐԱ,—Սերմացանի
5. ԻՄ ՀԱՍԿԵՐԸ,—Սաղաթեանի.
6. ԱՅԾԱՐԱԾ ՂԱՂՕՆ,—Յակ. Աղաբաբի.
7. ԳԷՏԻ ԱՓԻՆ,—Պլեշչէևից,—Ալ. Ծատուրեանի
8. ՊԷՊԱ,—Էրնստ Ալլգրէնի.
9. ՇԷԿՕՆ ՈՒ ՄԱՐԱԼԸ,—Ալ. Ահարոնեանի.
10. ՄԵԾ ՍԻՐՏԸ,,—ռուսերէնից,—Պ. Ս. Կ.-ի.
11. ՄԻՋԱՏՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ,—Ծղրիդն ու մրջիւնը,—Մ. Մուշայեանի.
12. ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ
13. ՁԻԱՐՃԱԼԻՔ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Պ. Կապտերեւ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ
Տարեկան 4 ր., առանց մանկավարժական բաժնի 3 ր.։ Тифлисъ, редакція «Аскеръ».

ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՆԵԼ
Թիֆլիսի կենտրօնական Նպաստամատոյց Յանձնաժողովը յայտարարում է, որ կրկին ստացված է
,,ԳԵՂՈՒՆԻ''
Զուտ արդիւնքը յատկացրված է յօգուտ հայ տառապեալների։ Ցանկացողները ստանալ այդ պատկերազարդ և շքեղ հատորը, որ գահլիճի ամենալաւ զարդն է և գեղարուեստական մեծ հաճոյք է պատճառում, թող շտապեն ուղարկել 4 ր. և ճանապարհածախսի համար 40 կ., ընդամենը 4 ր. 40 կօպ., «Մշակի» խմբագրատունը, «Գուտենբերգ» գրավաճառանոցը և կամ «Ժամանակի» լրագրի խմբագրատունը։
7—10

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇՄԸ

որպէս զարդ ժամացոյցի շղթային կախելու համար
և որպէս բրոշկա կանանց սեռի համար

Առանց կանխավճարի չէ ուղարկվում
Դիմել՝ Тифлисъ, Веляминовская 24
В. Варданяну.
Գինն է ոսկուց 18 ռուբ.
» արծաթից 3 »
ճանապարհածախսով
Գինն է ոսկուց 15 ռուբ.
» արծաթից 3 »
ճանապարհածախսով
(Ե. ու.) 3—10

ԿՈՉ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ
Թիֆլիսի Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան Վարչութիւնը յայտարարում է ի գիտութիւն յարգելի հայ հասարակութեան, որ փետրվար—մարտ ամիսների ընթացքում բանալու է Թիֆլիսում Որբանոց։
Ուստի խոնարհաբար խնդրում է ամեն մի հայի, իր ոյժերի համեմատ նպաստելով ինչով կարող է, թէ տան կահկարասիքով, (օր. մահճակալ, պահարան և այլն) թէ խոհանոցի ամանեղէններով և թէ հագուստեղէնի կտորներով, որով որոշ չափով կը դիւրացնեն և կը թեթևացնեն որբանոցի սկզբնական անհրաժեշտ ծախսերը։ Վարչութիւնս շնորհակալութեամբ կընդունէ իւրաքանչիւր հայի նպաստը։
Նուէրներ ընդունւում են ամեն օր առ. ժ. 10—12 ը հետևեալ հասցէով. Միխայլովսկի պր. տ. № 65. ֆոտօգրաֆիա Այվազեանի, տիկին Այվազեանին և Պասկևիչ փ. տ. № 13 տիկին Ասլանեանցին. Նուէրները բերողը կը ստանայ ստացական. բացի այդ՝ լրագրներում էլ առանձին հաշիւ կը տրւի։
6—8

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатная Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская, ул. № 5